ՏԵՂԵԿԱՆՔ

ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/2006 ԹՎԱԿԱՆ/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև համագործակցության միջկառավարական հանձնաժողովներ
- Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողով
- Ֆինանսական և տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողով
- Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական հանձնաժողով
- Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջկառավարական հանձնաժողով
- Հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողով
- Հայ- լիբանանյան միջկառավարական հանձնաժողով
- Հայ-կատարական միջկառավարական հանձնաժողով
- Առևտրատնտեսական հարցերով հայ-ղազախական միջկառավարական հանձնաժողով
- Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև տնտեսական և գիտատեխնիկական հարցերով միջկառավարական հանձնաժողով
- Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողով
- Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով
- Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

- Հայ-մոլդովական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-ղրղզական միջկառավարական հանձնաժողով
- Առևտրի, տնտեսության, տեխնոլոգիայի, գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում համագործակցության հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողով
- Առևտրի, արդյունաբերության, էներգետիկայի, գիտության, տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, կրթության և մշակույթի բնագավառներում հայ-չինական միջկառավարական հանձնաժողով
- Հայ- ճապոնական տնտեսական համագործակցության կոմիտե
- Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև առևտրատնտեսական ու գիտատեխնիկական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողով
- Հայ-ավստրիական միջկառավարական հանձնաժողով
- Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի հանրապետության միջև համագործակցության միջկառավարական հանձնաժողով
- Հայ-հունական տնտեսական, արդյունաբերական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով
- Հայաստան-Եվրամիություն համագործակցության կոմիտե
- ՀՀ ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողով

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

- **<u>Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության</u> միջև համագործակցության միջկառավարական հանձնաժողովներ**

1. ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Հանձնաժողովի հայկական մասի անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2000թ. հունիսի 20-ի թիվ 373 որոշմամբ, այնուհետև ՀՀ վարչապետի 2001թ. մարտի 6-ի թիվ 178, 2002թ. հունիսի 21-ի թիվ 379-Ա, 2003թ. մայիսի 30-ի թիվ 249-Ա, 2005թ. հոկտեմբերի 15-ի թիվ 804-Ա և 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1027-Ա և 2006թ. հոկտեմբերի 14-ի թիվ 770-Ա որոշումներով կատարվել են փոփոխություններ (հանձնաժողովի հայկական մասի նախագահ՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս.Սարգսյան, պատասխանատու քարտուղար՝ ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Ա.Մանասերյան, այնուհետև՝ Գ.Խոսրոև):

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել հանձնաժողովի համանախագահների հանդիպում (2006թ. հուլիսի 11-ից 12-ը, Երևան), Հանձնաժողովի 2005թ. հոկտեմբերի 13-ի կայացած 7-րդ նիստի արձանագրության որոշումների կատարման հարցերով պատասխանատու քարտուղարների մակարդակով (2006թ. հունվարի 20-ին, Մոսկվա) ու փորձագետների (2006թ. հուլիսի 3-ից 6-ը, Երևան) հանդիպումներ և հանձնաժողովի 8-րդ նիստը (2006թ. հոկտեմբերի 9-ին, Մոսկվա):

Համանախագահների հանդիպման ընթացքում քննարկվել են հանձնաժողովի 7-րդ նիստի արձանագրության որոշումների իրականացման հետ կապված հետևյալ հարցերը:

Պայմանագրաիրավական բազայի վիճակի և զարգացման վերաբերյալ

Արձանագրվեց ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին 2001թ. սեպտեմբերի 15-ի համաձայնագրի ուժի մեջ մտնելու և ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ազատ առևտրի մասին 1992թ. սեպտեմբերի 30-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը ստորագրման նախապատրաստելու հետ կապված աշխատանքի ավարտը, 2006թ. մարտի 31-ին ՀՀ

կառավարության և «Գազպրոմ» ԲԲԸ միջև ՀՀ տարածքում գազաէներգետիկ ծրագրերում մասնակցության մասին համաձայնագրի ստորագրումը:

Հատուկ ուշադրության արժանացավ միջկառավարական և միջգերատեսչական համաձայնագրերի շրջանառվող նախագծերի համաձայնեցման գործընթացը:

Կողմերը պայմանավորվեցին հանձնարարել համապատասխան գերատեսչություններին՝ համաձայնեցնել այդ համաձայնագրերի նախագծերը և դրանց ստորագրման պատրաստ լինելու մասին զեկուցել հանձնաժողովի ութերորդ նիստի ընթացքում, իսկ կողմերի արտաքին գերատեսչություններին՝ նշված նիստի ընթացքում զեկուցել պայմանագրաիրավական բազայի գույքագրման արդյունքների մասին:

Փոխադարձ առևտրի, առևտրատնտեսական, ֆինանսական և գույքային հարաբերությունների վիճակի վերաբերյալ

Անդրադարձ եղավ 2007-2009թ.թ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով ՀՀ-ում տիեզերական մոնիտորինգի կենտրոն ստեղծելու նպատակով Հայաստանի փրկարարական ծառայությանը 157,5 մլն. դրամ գումար հատկացնելուն (որով փաստորեն հայկական կողմը սկսում է կենտրոնի ստեղծման գործընթացը, սակայն հատկացված ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով հավանաբար հայկական կողմը հետաձգի նշված հարցի քննարկումը):

Անդադարձ եղավ և քննարկվեց նաև Հայաստանի և Ռուսաստանի միջև փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալների պարբերական համադրման նպատակով կողմերի պետությունների մաքսային մարմինների կողմից փոխադարձ առևտրի մաքսային վիճակագրության համադրման Պլան գրաֆիկի համաձայնեցման գործընթացին, կարճ ժամկետում հիմնական արտադրատեսակների արտադրության մասին տեղեկության կանոնավոր փոխանակման ապահովման մեխանիզմի ստեղծման աշխատանքի ավարտման անհրաժեշտությանը, մինչև 2010թ. ընկած ժամանակահատվածի ՀՀ և ՌԴ միջև երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագրի իրականացման միջոցառումների պլանի ճշգրտման աշխատանքին:

Կողմերը պայմանավորվեցին հանձնարարել իրենց մաքսային մարմիններին՝ կատարված աշխատանքի արդյունքների մասին հանձնաժողովի ութերորդ նիստի ընթացքում, իսկ առևտրաարդյունաբերական պալատներին՝ հիմնական արտադրատեսակների արտադրության մասին տեղեկության կանոնավոր փոխանակման ապահովման մեխանիզմի ստեղծման աշխատանքի ավարտման մասին մինչև ս.թ.

սեպտեմբեր զեկուցելու, ինչպես նաև Ռուսաստանի տնտեսական զարգացման նախարարությանը՝ 2010թ. ընկած ժամանակահատվածի ՀՀ և ՌԴ միջև երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագրի իրականացման միջոցառումների պլանի ճշգրտման վերաբերյալ առաջարկությունները մինչև հանձնաժողովի ութերորդ նիստը ներկայացնելու վերաբերյալ:

Պետական պարտքի մարման դիմաց ՌԴ-ին ի սեփականություն հանձնված ՀՀ ձեռնարկությունների աշխատանքի վերաբերյալ

Կողմերը նշելով ՌԴ-ին ի սեփականություն հանձնված ՀՀ ձեռնարկությունների արդյունավետ աշխատանքի ապահովման ենթահանձնաժողովի աշխատանքի անարդյունավետությունը և դրա ակտիվացման անհրաժեշտությունը, պայմանավորվեցին ենթահանձնաժողովի ազգային մասերին հանձնարարել անհետաձգելի և սպառիչ միջոցներ ձեռնարկել ձեռնարկությունների արդյունավետ աշխատանքի ապահովման նպատակով և արդյունքների մասին զեկուցել հանձնաժողովի ութերորդ նիստի ընթացքում:

Վառելիքաէներգետիկ համալիրի բնագավառում համագործակցության վերաբերյալ

Կողմերը գոհունակությամբ փաստելով 2006թ. մարտի 31-ին ՀՀ կառավարության և «Գազպրոմ» ԲԲԸ միջև ՀՀ տարածքում գազաէներգետիկ ծրագրերում մասնակցության մասին համաձայնագրի ստորագրումը, որով սահմանվեցին Իրան-Հայաստան գազատարի շինարարության և Հրազդան ՋԷԿ-ի գույքային համալիրի գործարկման նախագծերում ռուսական ընկերությունների մասնակցության ձևերն ու պայմանները, պայմանավորվեցին հանձնարարել իրենց նախարարություններին և գերատեսչություններին՝ ապահովել ստորագրված համաձայնագրի դրույթների իրականացումը:

Տրանսպորտի և կապի բնագավառում համագործակցության վերաբերյալ

Ի գիտություն ընդունվեց հայկական կողմի մտահոգությունը ռուսական կողմից երեք ամսով «Վերին Լարս» անցակետը փակելու հետ կապված Հայաստանյան ապրանքների մատակարարման հարցում ստեղծված դժվար կացության վերաբերյալ: Հայկական կողմը հույս հայտնեց, որ ռուսական կողմը օպերատիվ միջոցներ կձեռնարկի իրավիճակի ապաշրջափակման ուղղությամբ:

Հայկական կողմը նշեց, որ ներկայումս Կովկաս նավահանգստում Կերչի ուղղությամբ գործող միակ երկաթուղալաստանավային ուղին չի ապահովում Հայաստանի արտահանման և ներմուծման ամբողջ ծավալը, որի հետ կապված արդիական է մնում Կովկաս-Փոթի երկաթուղալաստանավային ուղու կանոնավոր աշխատանքի կազմակերպման, ինչպես նաև Նովոռոսսիյսկ-Փոթի ավտոմոբիլային հաղորդակցության վերականգնման հարցը:

ՌԴ «Спутниковая связь» դաշնային պետական ունիտար ձեռնարկության տիեզերական ապարատների և վերգետնյա կայանքների տարողությունների օգտագործման առևտրային առաջարկություններից ելնելով, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ղեկավարությունը դիմել է VSAT ցանցում, ներառյալ ինտերնետ մուտքի իրավունքը, հեռամատային ծառայությունների անհատույց օգտվելու տրամադրման հարցում աջակցության խնդրանքով:

Կողմերը պայմանավորվեցին, որ ռուսական կողմը հնարավոր սեղմ ժամկետում կդիմի ՌԴ ղեկավարությանը՝ «Վերին Լարս» անցակետում Հայաստանից/դեպի Հայաստան ավտոմոբիլային տրասպորտի երթևեկության շուտափույթ վերականգնման հարցով (Ռուսական կողմը հանդիպման ավարտին հայկական կողմի նախաձեռնությամբ նախապատրաստեց ՌԴ Նախագահին ուղղված դիմում): Կողմերը պայմանավորվեցին նաև Հայաստանի տրանսպորտի և կապի նախարարությանը և Ռուսաստանի տրանսպորտի նախարարությանը հանձնարարել կոնկրետ առաջարկություններ նախապատրաստել Կովկաս-Փոթի երկաթուղալաստանավային ուղու կանոնավոր աշխատանքի կազմակերպման և Նովոռոսսիյսկ-Փոթի ավտոմոբիլային հաղորդակցության վերականգնման վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, որ Ռուսաստանի տեղեկատվության և կապի նախարարությունը կդիտարկի Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ղեկավարության խնդրանքը և համապատասխան առաջարկության մասին կզեկուցի հանձնաժողովի ութերորդ նիստի ընթացում:

Հումանիտար ոլորտում համագործակցության վերաբերյալ

Կողմերը գոհունակությամբ նշեցին Ռուսաստանում Հայաստանի տարվա շրջանակներում միջոցառումների հաջող իրականացումը, համագործակցության շարունակումը սպորտի, ՌԴ բուհերում ՀՀ կադրերի պատրաստման, գիտության և տեխնիկայի բնագավառներում: Նպատակահարմար համարվեց համագործակցության զարգացումը բնապահպանության ոլորտում:

Կողմերը պայմանավորվեցին Ռուսաստանում Հայաստանի տարվա շրջանակներում միջոցառումների պլանի անվերապահ կատարման մասին, ինչպես նաև հանձնարարեցին «Ռոսօբրազովանիային» ավարտել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի կանոնադրության նոր նախագծի և դրա հաստատման աշխատանքը:

Կողմերը պայմանավորվեցին հանձնաժողովի ութերորդ նիստն անցկացնել 2006թ. հոկտեմբերին՝ Մոսկվայում:

ՀՀ և ՌԴ միջև համագործակցության միջկառավարական հանձնաժողովների աշխատանքի վերաբերյալ

2006թ. հոկտեմբերի 9-ին Մոսկվայում տեղի ունեցան ՀՀ և ՌԴ միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ 8-րդ նիստը, իսկ հոկտեմբերի 6-ին՝ հանձնաժողովի շրջանակներում ստեղծված ՀՀ կողմից ՌԴ-ին ի սեփականություն փոխանցված ձեռնարկությունների արդյունավետ աշխատանքի ապահովման ենթահանձնաժողովի համանախագահների հանդիպումը:

Միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում կողմերը քննարկեցին հանձնաժողովի 7-րդ նիստի արձանագրության և հանձնաժողովի համանախագահների 2006թ. հունիսի 12-ի հանդիպման արձանագրության կատարման ընթացքին, երկկողմ հարաբերությունների իրավապայմանագրային հենքի հետագա զարգացմանը, առևտրատնտեսական, ֆինանսական, գույքային հարաբերություններին, բնապահպանության ոլորտում համագործակցության, պետական պարտքի մարման դիմաց ՌԴ-ին ի սեփականություն հանձնված ՀՀ ձեռնարկությունների աշխատանքին առնչվող հարցերը, տրանսպորտի և կապի, վառելիքաէներգետիկ և հումանիտար ոլորտներում համագործակցության խորացման հարցերը:

Հանձնաժողովը մասնավորապես որոշեց.

համապատասխան գերատեսչություններին հանձնարարել ակտիվացնել համաձայնագրերի նախագծերի համաձայնեցման, իրավապայմանագրային հենքի զարգացման ու կատարելագործման աշխատանքը;

ՀՀ և ՌԴ ԱԳՆ-ներին շարունակել տեղեկատվություն կանոնավոր փոխանակումը երկկողմ հարաբերությունների իրավապայմանագրային հենքի հետագա զարգացման հարցերի, այդ թվում՝ ստորագրված փաստաթղթերի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի վերաբերյալ;

ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայկական փրկարար ծառայությանը և Ռոսկոսմոսին մինչև տարեվերջ բանակցություններ վարել ՀՀ-ում տիեզերական մոնիտորինգի կենտրոնի ստեղծման տեխնիկական առաջարկությունների համաձայնեցման և համապատասխան փաստաթղթի նախապատրաստման ու ստորագրման հարցերի շուրջ:

Կողմերի բանկային կառույցներին շարունակել փոխշահավետ համագործակցությունը բանկային և արժութային-ֆինանսական ոլորտներում, այդ թվում՝ ակտիվացնել աշխատանքը միջբանկային ենթակառուցվածքի ստեղծման և զարգացման ուղղությամբ;

Հայկական կողմին քննարկել ՌԴ տնտեսական զարգացման նախարարության ներկայացրած ՀՀ և ՌԴ միջև մինչև 2010թ. երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագրի իրականացման միջոցառումների ճշգրտված ծրագիրը և կողմերին համաձայնեցնել ծրագրի վերջնական տարբերակը:

Նիստի ընթացքում **էներգետիկայի ոլորտում** քննարկված կարևորագույն հարցերից էին գազային և ատոմային էներգետիկայի ոլորտներում երկկողմ համագործակցության հարցերը: Այդ ուղղությամբ միջկառավարական հանձնաժողովը որոշեց.

«Գազպրոմ» ԲԲԸ-ին քննարկել ՌԴ տարածքով ՀՀ բնական գազի փոխադրման ոլորտում ներքին ռուսական սակագների կիրառման հնարավորության հարցը;

ՌԴ ֆինանսների նախարարությանը քննարկել ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև գազային արդյունաբերության ոլորտում համագործակցության մասին համաձայնագրի նախագծում ՀՀ-ին մատակարարվող բնական գազի ծավալների ոլորտում ավելացված արժեքի հարկի վերացումը նախատեսող որոշակի արտոնային ռեժիմի կիրառման վերաբերյալ համապատասխան դրույթ մտցնելու հնարավորության հարցը;

ատոմային էներգետիկայի ոլորտում համատեղ ծրագրերի մշակման և կորդինացման նպատակով կողմերի շահագրգիռ կազմակերպություններին հանձնաժողովի շրջանակներում ստեղծել ատոմային էներգետիկայի ոլորտում համագործակցության աշխատանքային խումբ;

ՀՀ էներգետիկայի նախարարությանը, Ռոսատոմին և «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ»-ին 2007թ. առաջին կիսամյակում նախապատրաստել Հայկական ատոմակայանի հեռանկարային զարգացման ծրագրի կոնցեպտուալ նախագիծ, որը կներառի թիվ 1 էներգաբլոկը կոնսերվացման ռեժիմ տեղափոխելու ծրագիրը, ինչպես նաև Հայկական

ատոմակայանի կազմում նոր ատոմային էներգաբլոկի շինարարության նախագծի ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների անցկացման վերաբերյալ միջոցառումների ծրագիրը;

Տրանսպորտի ոլորտում հանձնաժողովը որոշեց.

կողմերը համաձայնեցին Կովկաս նավահանգստում ենթակառույցի երկրորդ հերթի շինարարության ավարտից հետո ջանքեր գործադրել Փոթի-Կովկաս երկաթուղային-լաստանավային հաղորդակցության համար բեռների լրացուցիչ ծավալի ներգրավման և նրա վերագործարկման ուղղությամբ;

կողմերը տեղեկատվություն կփոխանակեն Նովորոսիյսկ-Փոթի ավտոմոբիլալաստանավային հաղորդակցության կազմակերպման հնարավորության վերաբերյալ;

Հումանիտար համագործակցության ոլորտում հանձնաժողովը որոշեց.

ՀՀ ԱԳՆ-ին ու մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությանը և ՌԴ ԱԳՆ-ին ու մշակույթի և զանգվածային հաղորդակցությունների նախարարությանը հանձնաժողովի համանախագահների հերթական հանդիպման համար նախապատրաստել հաշվետվություն Ռուսաստանում Հայաստանի Տարվա անցկացման մասին;

ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կոմիտեին և ՌԴ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դաշնային գործակալությանը շարունակել աջակցությունը սպորտի բնագավառում հայ-ռուսական համագործակցության զարգացմանը;

ՀՀ և ՌԴ կրթության և գիտության նախարարություններին 2007թ. ընթացքում խորհրդատվություններ անցկացնել գիտատեխնիկական ոլորտում երկկողմ համագործակցության առաջնային ուղղությունների ճշգրտման վերաբերյալ;

ՀՀ կողմից ՌԴ-ին որպես սեփականություն փոխանցված ձեռնարկությունների արդյունավետ աշխատանքի ապահովման ենթահանձնաժողովի համանախագահների հանդիպման ժամանակ կողմերը քննարկեցին հիշյալ ձեռնարկությունների գործունեության հետ կապված հարցերի ողջ շրջանակը, մասնավորապես այդ ձեռնարկությունների կողմից քաղաքացիական նշանակության ապրանքների արտադրության հնարավորության հարցը: Ենթահանձնաժողովի որոշմամբ ռուսական կողմը կներկայացնի քաղաքացիական նշանակության ապրանքների արտադրության հնարավորությունների ցանկը, իսկ հայկական կողմը՝ ՀՀ կողմից ներմուծվող արտադրանքի ցանկը, որի հիման վրա ռուսական կողմը կսահմանի ապրանքների

արտադրության հնարավորությունների ցանկը և ձեռնարկություններին կներկայացնի համապատասխան կոնստրուկտորատեխնիկական փաստաթղթեր:

2. **Ռուսաստանյան ռազմակայանին վարձակալության հիմունքներով հողամասերի և անշարժ գույքի հանձնման և ընդունման հայ-ռուսական միջպետական հանձնաժողով**

Հանձնաժողովի հայկական մասի անհատական կազմը հաստատվել է ՀՀ Նախագահի 2000թ. փետրվարի 26-ի թիվ ՆՀ-489 հրամանագրով (հանձնաժողովի հայկական մասի նախագահ՝ ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ - պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-գնդապետ Մ.Հարությունյան): ՀՀ Նախագահի 2000թ. օգոստոսի 23-ի թիվ ՆՀ-653 հրամանագրով կատարվել են փոփոխություններ:

2006թ. սեպտեմբերի 25-28-ը Երևանում տեղի ունեցավ ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման գործառման համար հողամասերի և անշարժ գույքի հանձնման միջպետական հանձնաժողովի 6-րդ նիստը:

Նիստին մասնակցում էին հայկական և ռուսական մասերի անդամները, ինչպես նաև ՀՀ գործադիր իշխանության մարմինների, Երևանի քաղաքապետարանի, Շիրակի ու Արագածոտնի մարզպետարանների աշխատակիցները:

Նիստի ընթացում քննարկվեցին հետևյալ հարցերը.

Միջպետական հանձնաժողովի 5-րդ նիստի Արձանագրության կատարման ընթացքի վերաբերյալ կողմերը նշեցին, որ հանձնաժողովի 2005թ. դեկտեբերի 23-ի 5-րդ նիստի արձանագրություններով նախատեսված որոշումները հիմնականում կատարված են, և որոշվեց 2006-2007թթ. շարունակել արձանագրության դրույթների իրականացման աշխատանքները:

Պայմանագրաիրավական բազայի վիճակի և զարգացման վերաբերյալ ՀՀ և ՌԴ միջև ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրի մասին 5-րդ արձանագրության նախագծի համաձայնեցման ընթացքում, /այն նախատեսում է ՌԴ պաշտպանության նախարարությանը լիազորություններ տալ ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանին ժամանակավոր անհատույց օգտագործման համար փոխանցված շենքերում և շինություններում հիմնանորոգում անցկացնել /, ռուսական կողմը տեղեկացրեց, որ ՌԴ ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացության

համաձայն ՌԴ կողմից հիմնավերանորոգման աշխատանքներ կարող են իրականացվել միայն ՌԴ սեփականություն հանդիսացող օբյեկտներում:

Ռուսական կողմի առաջարկությամբ որոշվեց արձանագրության նախագծի մշակման հետագա աշխատանքները դադարեցնել:

Միջպետական հանձնաժողովը ՌԴ պաշտպանության նախարարությանն առաջարկեց շարունակել ՀՀ և ՌԴ միջև Գյումրու թիվ 8 զինվորական ավանի տարածքում գտնվող անավարտ շինությունները սեփականության իրավունքով Ռուսաստանի Դաշնությանը փոխանցելու մասին համաձայնագրի ու ՀՀ Կառավարության և ՌԴ Կառավարության միջև 1996թ. սեպտեմբերի 27-ի՝ ՀՀ Կառավարության և ՌԴ Կառավարության միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի և ռուսասանյան ռազմակայանի տեղաբաշխման ու գործառման համար հողամասերի հանձնման և օգտագործման կարգի մասին համաձայնագրում /Աշտարակ-Եղվարդ 1-ին զինվորական ավան/ փոփոխություն կատարելու մասին արձանագրության նախագծերը ստորագրման նախապատրաստելու գործընթացը:

Հայկական կողմը ռուսական կողմին տեղեկացրեց, որ վերոնշյալ փաստաթղթերի նախագծերը Հայաստանի Հանրապետությունում անցել են ներպետական համաձայնեցման գործընթացները և պատրաստ են ստորագրման:

«ԲԿՄԱ», «Դրուժբա» և «Սպորտ» օբյեկտները ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի Երևանի կոմունալ շահագործման մասի հաշվեկշռին ժամանակավոր անհատույց օգտագործման համար փոխանցման վերաբերյալ հանձնաժողովն այցելեց և ուսումնասիրեց նշված օբյեկտների վիճակը և ՀՀ պաշտպանության նախարարությանն առաջարկեց «ԲԿՄԱ» հանրակացարանի ինքնին ինժեներային համակարգում իրականացնել հիմնանորոգման բնույթի աշխատանքներ, համապատասխան մարմինների հետ համատեղ որոշել փախստականների տարհանման հարցը, «ԲԿՄԱ», «Դրուժբա» և «Սպորտ» հանրակացարաններում տեղադրել վառելիքաէներգետիկ ռեսուրսների հաշվառման սարքավորումներ:

Սույն աշխատանքները կատարելուց հետո նշված օբյեկտները ՌԴ ՊՆ հաշվեկշռին ժամանակավոր անհատույց օգտագործման համար փոխանցելու հարցը կքննարկվի միջպետական հանձնաժողովի հերթական նիստի ընթացքում:

2002թ. նոյեմբերի 5-ի պայմանագրի համաձայն՝ ՌԴ պաշտպանության նախարարության մանկական նախադպրոցական հիմնարկ ստեղծելու համար

հողատարածք և շինություն տրամադրելու վերաբերյալ հանձնաժողովը հայկական կողմին առաջարկեց ՀՀ Կառավարության և ՌԴ Կառավարության միջև ՀՀ տարածքում ՌԴ ՊՆ մանկական նախադպրոցական հիմնարկներ ստեղծելու մասին 1996թ. հունվարի 26-ի համաձանագրի հիման վրա քննարկել մանկական նախադպրոցական հիմնարկ ստեղծելու նպատակող ռուսաստանյան ռազմակայանին Երևանում հողամասի և շինությունների հատկացման հարցը:

«Էրեբունի» օդանավակայանում ռուսաստանյան ռազմակայանի օդանավերի կայանման վեաբերյալ հանձնաժողովն այցելեց «Էրեբունի» օդանավակայան և ուսումնասիրեց ռուսաստանյան ռազմակայանի օդանավերի կայանման համար հատկացված հողամասը և ՀՀ ու ՌԴ պաշտպանության նախարարություններին առաջարկեց սկսել հողատարածքի օգտագործման համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակման գործընթացը:

ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի գտնվելու հետ կապված ծախսերի հաշվարկման և մարման կարգի վերաբերյալ կողմերի պաշտպանության նախարարությունների լիազորված մարմինները քննարկեցին և 2006թ. սեպտեմբերի 28-ին ստորագրեցին ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի գտնվելու հետ կապված ծախսերի հաշվարկման և մարման կարգը:

3. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Հանձնաժողովի հայկական մասի կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2003թ. դեկտեմբերի 23-ի թիվ 659-Ա որոշմամբ (հանձնաժողովի հայկական մասի ղեկավար՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Յու.Խաչատուրով):

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել հանձնաժողովի փորձագետների աշխատանքային հանդիպում /2006թ. մայիսի 17-20-ը, Սանկտ-Պետերբուրգ, և 2006թ. մայիսի 30-ից հունիսի 3-ը, Երևան/ և հանձնաժողովի 3-րդ նիստը /2006թ. օգոստոսի 2-4-ը, Մոսկվա/:

Հանձնաժողովի փորձագետների տեղի ունեցած աշխատանքային հանդիպումների ընթացքում կողմերը քննարկեցին հետևյալ հարցերը.

Ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման մասին Հայկական կողմի դիմումի ուսումնասիրման ընթացքի և արդյունքների վերաբերյալ

Ռուսական կողմը ներկայացրեց ռազմական նշանակության արտադրանքի արտաքին պատվերների քննարկման կարգը և տեղեկություններ հաղորդեց Հայկական կողմի պատվերի դիտարկման ընթացքի մասին: Հայկական կողմը կրկին հավաստեց ռազմական նշանակության արտադրանք ստանալու իր մտադրության մասին և ռուսական կողմին է ուղարկել պահանջվող արտադրանքի տեսականու և քանակի մասին համապատասխան դիմում /մինչ օրս ռուսական կողմից պատասխան չի ստացվել/,

1992թ. մայիսի 15-ի Հավաքական անվտանգության պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին համաձայնագրի իրագործման մեխանիզմների վերաբերյալ,

ռազմական նշանակության արտադրանքի պահեստամասերի, կոմպլեկտավորող սարքավորումների և սպառող նյութերի մատակարարման հեշտացված կարգի վերաբերյալ,

ռազմատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտների մասին տեղեկությունների փոխանակման, ռուսաստանյան 102-րդ ռազմակայանի սպառազինության և ռազմական տեխնիկայի ՀՀ ձեռնարկություններում վերանորոգման հարցի նորմատիվ-իրավական կարգավորման, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 3-րդ նիստի վերաբերյալ

2006թ. օգոստոսի 2-4-ը ք.Մոսկվայում տեղի ունեցավ ՀՀ և Ռուսաստանյան Դաշնության միջև ռազմատեխնիկակա համագործակցության միջկառավարական հանձնաժողովի (ՌՀՄՀ) 3-րդ նիստը, որին քննարկվեցին հետևյալ հարցերը.

ՌՀՄՀ 2-րդ նիստի որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ

Հանձնաժողովը, լսելով և ի գիտություն ընդունելով ՌՀՄՀ 2-րդ նիստի որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը, միանգամայն, որոշում ընդունեց, համաձայն որի ռուսաստանյան կողմը ՌԴ Կառավարություն և ՌԴ Նախագահի աշխատակազմ կներկայացնի ՀՀ այն ձեռնարկությունների, որոնց բաժնետոմսերը պատկանում են ՌԴ-ին, արդյունավետ գործունեությունն ապահովելու հետ կապված խնդրահարույց հարցերի վերաբերյալ զեկույցներ՝ հարցին լուծում տալու նպատակով:

Երկկողմ համագործակցության նորմատիվ իրավական բազան զարգացնելու վերաբերյալ

Հանձնաժողովի նիստին քննարկվեց ռազմատեխնիկական բնագավառում առկա երրկողմ համաձայնագրերի իրագործման ընթացքը, նշվեց մշակման փուլում գտնվող համապատասխան համաձայնագրերի նախագծերի համաձայնեցումն ավարտի հասցնելու անհրաժեշտությունը:

Մասնավորապես, հանձնաժողովը լսեց ՀՀ Կառավարության և ՌԴ Կառավարության միջև երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության ընթացքում օգտագործվող և ձեռք բերված մտավոր գործունեության արդյունքների վերաբերյալ իրավունքների փոխադարձ պաշտպանության մասին հմաձայնագրի իրագործման հնարավոր մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվությունը և կողմերի լիազոր մարմիններին հանձնարարեց շարունակել համաձայնագրի իրագործմանն ուղղված քայլերը:

Հանձնաժողովը լսեց ՀՀ Կառավարության և ՌԴ Կառավարության միջև ռազմական նշանակության արտադրանքի երրորդ երկրներ արտահանման ընթացքում փոխգործակցության մասին համաձայնագրի նախագծի համաձայնեցման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը և հանձնարարեց կողմերի լիազոր մարմիններին հստակեցնել համաձայնագրի ստորագրման ժամկետներ:

Հանձնաժողովն անդրադարձավ նաև միջպետական բազմակողմ համաձայնագրերի շրջանառվող նախագծերի համաձայնեցման գործընթացի վիճակին:

ՀՀ արդյունաբերական ձեռնարկություններում ՌԴ 102-րդ ռազմակայանի սպառազինության և տեխնիկայի վերանորոգման կազմակերպման նորմատիվ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ

Հանձնաժողովը լսեց և ի գիտություն ընդունեց ՌԴ 102-րդ ռազմակայանի սպառազինության և տեխնիկայի վերականգնման համար անհրաժեշտ ՀՀ ձեռնարկությունների իրական հնարավորությունները և արտադրական հզորությունները գնահատելու նպատակով կատարված աշխատանքի արդյունքների, ինչպես նաև վերանորոգման աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերին ՀՀ մասնագետներին ծանոթացնելու ընթացքի և դրանք հայկական կողմին փոխանցելու հետ կապված խնդիրների վերաբերյալ կողմերի տեղեկատվությունը:

Որոշում կայացվեց կազմակերպել ՀՀ ՊՆ և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների այցելություններ ՌԴ ՊՆ

համապատասխան ձեռնարկություններ՝ այդ ձեռնարկություններում իրականացվող վերանորոգման ու արդիականացման տեխնոլոգիային և փաստաթղթերին ծանոթացնելու նպատակով, այնուհետև ՀՀ ձեռնարկություններում ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մինչև 2007թ. մարտի 31-ը համաձայնեցված առաջարկություններ ներկայացնել՝ հայկական ձեռնարկություններում ՌԴ 102-րդ ռազմակայանի սպառազինության և տեխնիկայի վերանորոգման կազմակերպման և իրականացման կարգի վերաբերյալ:

ՀԱՊԿ անդամ պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին 1992թ. մայիսի 15-ի համաձայնագրի պայմանների հիման վրա ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման համար ՌԴ-ում գների գոյացման կարգի վերաբերյալ

Հանձնաժողովը քննարկեց տվյալ հարցի շրջանակներում երկու երկրների համագործակցության հնարավորությունները: Արդյունքում ռուսաստանյան կողմը խոստացավ քննարկել հայկական կողմին վերջինիս կողմից ձեռքբերվելիք ՌԴ ռազմական նշանակության արտադրանքի ՌԴ ներքին գների մասին տեղեկատվություն տրամադրելու հարցը:

Ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման վերաբերյալ

Հանձնաժողովը, անդրադառնալով համագործակցության այս ոլորտում առկա բարդություններին, մասնավորապես՝ ՌԴ-ից ՀՀ ներկրվող ռազմական նշանակության արտադրանքի տարանցման հետ կապված խոչընդոտներին, որոշեց կողմերին հանձնարարել խորհրդակցություններ անցկացնել՝ խնդրի լուծման ճանապարհներ փնտրելու նպատակով:

Կողմերը պայմանավորվեցին ՌՀՄՀ չորրորդ նիստն անցկացնել 2007թ. երրորդ եռամսյակում:

Հանձնաժողովի 3-րդ նիստի արդյունքների վերաբերյալ կազմվեց համապատասխան արձանագրություն, որը ստորագրվեց հանձնաժողովի հայկական և ռուսաստանյան մասերի ղեկավարների կողմից:

4. **ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում ստեղծված ՀՀ տարածքում ՌԴ ԶՈՒ զինվորական կազմավորումների գտնվելու հետ կապված ՀՀ ծախսերի հաշվարկների մեխանիզմի մշակման ուղղությամբ համատեղ աշխատանքային խումբ**

Խմբի հայկական մասի անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2003թ. նոյեմբերի 21-ի թիվ 596-Ա որոշմամբ (աշխատանքային խմբի հայկական մասի ղեկավար՝ ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետ, գնդապետ Ա.Սարգսյան):

Հաշվետու ժամանակահատվածում հանդիպում տեղի չի ունեցել:

- **Տնտեսական համագործակցության <u>հայ-ամերիկյան</u> միջկառավարական հանձնաժողով**

Ս.թ. մայիսի 2-ին Երևանում տեղի ունեցավ Հայ-ամերիկյան աշխատանքային խմբի 12-րդ հերթական նիստը: Նիստի ժամանակ քննարկվել է հարցերի հետևյալ շրջանակը.

- **Հայաստանին ցուցաբերվող ամերիկյան աջակցություն ու հայ-ամերիկյան համագործակցություն,**
- **Տնտեսական աճին նպաստող ժողովրդավարական բարեփոխումներ.**
  - ժողովրդավության զարգացմանը և ազատ ու արդար ընտրություններին նպաստող բարեփոխումներ,
  - հակակոռուպցիոն միջոցառումների իրականացում
- **Հազարամյակի մարտահրավեր ծրագիր**
- **Մակրոտնտեսական քաղաքականություն և երկարաժամկետ աճ**
  - ֆիսկալ քաղաքականության բարելավում,
  - աջակցություն հարկային և մաքսային վարչարարության ոլորտում հետագա բարեփոխումներին,
  - օտարերկրյա ներդրումների և ՓՄՁ զարգացման խրախուսում
- **Առևտրին առնչվող հարցեր.**
  - մաքսային հարցեր,

մտավոր սեփականության իրավունքներ

- **Գյուղատնտեսական զարգացում և աջակցություն գյուղատնտեսության ոլորտին,**

  գյուղատնտեսության ոլորտում ամերիկյան աջակցություն,

  ջրային ռեսուրսների կառավարում և ոռոգման համակարգ

  գյուղատնտեսական զարգացմանն ուղղված ԱՄՆ աջակցության ծրագրեր
- **Թռչնի գրիպ**
- **Դատական համակարգի բարեփոխումների ուղղված աջակցություն**
- **Էներգետիկ անվտանգություն և էներգետիկ ենթակառուցվածք.**

  Հայկական ատոմակայանի փակման ընթացքը
- **Կրթություն.**

  Հայաստանում կրթական համակարգի և տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված ծրագրեր,

  Հայաստանի դպրոցների փոխկապակցման ծրագրի շարունակական ֆինանսավորում և փոխանցում
- **Ահաբեկչության դեմ պայքարի հնարավորություններ և անդրսահմանային խնդիրներ**

  մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար,

  իրավապահ ոլորտի բարեփոխումներ,

  փողերի լվացում:

Արդարացի կառավարում ու ժողովրդավարական բարեփոխումներ. ԱՄՆ կառավարությունը շեշտադրեց Հայաստանի 2007 և 2008թթ. ընտրությունների ազատ ու արդարացի անցկացմանն ուղղված աշխատանքների, ժողովրդավարական բարեփոխում-ների իրականացման գործում իշխանության բոլոր օղակների ներգրավման կարևորությունը: ԱՄՆ կառավարությունը ներկայացրեց այդ ոլորտում նախանշվող աջակցության իր համակողմանի ծրագրերն և կարևորեց տեխնիկական ու աշխատանքային խնդիրների հետ առնչվող անձանց այս աշխատանքներում ակտիվ դերակատարման հնարավորության ընձեռումը: ՀՀ կառավարությունը համաձայնեց, որ ժողովրդավարական բարեփոխումները գերակա խնդիր են հանդիսանում ու իր աջակցությունը հայտնեց նշելով, որ ծրագրի որոշ տարրերի իրականացումն արդեն սկսված է:

ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. հետևողական աշխատանք տանել ազատ և արդար ընտրությունների ապահովման ուղղությամբ:

ԱՄՆ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. աջակցել ՀՀ կառավարության աշխատանքներին այս ասպարեզում:

Պայքար կոռուպցիայի դեմ. Ամերիկյան կողմը նշեց, որ ՀՀ կառավարության ընթացիկ հակակոռուպցիոն ծրագրի ժամկետն արդեն ավարտին է մոտենում ու խրախուսեց ՀՀ կառավարությանը ժամանակին անցկացնել մանրամասն ու անկախ գնահատում ու վերլուծություն: ԱՄՆ կառավարությունը դիմեց ՀՀ կառավարությանը ընթացիկ ծրագրի գնահատման ու նոր ծրագրի մշակման աշխատանքներում քաղաքացիական հասարակությանը ներգրավելու, ինչպես նաև նոր ծրագրում լավագույն միջազգային փորձն ընդգրկելու խնդրանքով: ԱՄՆ կառավարությունը մատնանշեց, որ ԱՄՆ ՄԶԳ-ն բոլոր ծրագրերում ներառված է հակակոռուպցիոն բաղադրիչ, իսկ առաջիկա ամիսներին նախատեսում է սկսել մի նոր ծրագիր, որը բացառապես կկենտրոնանա այս խնդրի շուրջ: ՀՀ կառավարությունը համաձայնեց, որ այդ կարգի գնահատում կատարելը լավ գաղափար է, և նշեց, որ ՀՀ կառավարությունը՝ աշխատելով քաղաքացիական հասարակության հետ կառաջնորդի այդ վերլուծական գործընթացը:

ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. անցկացնել հակակոռուպցիոն ծրագրի մանրակրկիտ ու անկախ գնահատում ու վերլուծություն և առավել խիստ միջոցներ ձեռնարկել տեղական ու կենտրոնական իշխանությունների կոռումպացված պաշտոնյաների նկատմամբ:

Հազարամյակի մարտահրավեր ծրագիր. ՀՀ կառավարությունը հայտնեց, որ Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի գործընթացը մարտի 27-ի համաձայնագրի ստորագրումից հետո արագ առաջ է ընթանում ու նշանակալի առաջընթաց է նկատվել Շահառուների խորհրդի ձևավորման, գլխավոր գործադիր պաշտոնյայի ընտրության ու այլ հարցերում: ԱՄՆ կառավարությունը մտահոգություն հայտնեց ՀՄԿ չափորոշիչների մասով նկատվող անկման վերաբերյալ ու հիշեցրեց ՀՀ կառավարությանը, որ վերջինս պետք է շարունակի բավարարել ՀՄԿ 16 ցուցանիշների մասով առաջադրվող պահանջներին, որոնց ապահովումն անհրաժեշտ է ոչ միայն ՀՄՀ ֆինանսավորում ստանալու իրավունք ձեռք բերելու համար, այլև Հայաստանում ՀՄԿ ծրագրի տևողության ընթացքում: ԱՄՆ կառավարությունը ՀՀ կառավարությանը

հիշեցրեց, որ օրենսդրությամբ սահմանվում է, որ կատարողական ցուցանիշների անկման դեպքում երկրի մասնակցությունը ՀՄՀ ծրագրում կամ ՀՄՀ աջակցության ստացումը կարող է ժամանակավորապես կասեցվել կամ էլ ամբողջովին դադարեցվել: ՀՀ կառավարությունը հայտնեց, որ ՀՄՀ ծրագրի իրականացման գործընթացը իշխանությունների ուշադրության կենտրոնում է և ակնկալում է ՀՄԿ-ի շարունակական ներդրումն ու աջակցությունը:

ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. բարելավել կատարողական ցուցանիշները ՀՄԿ չափորոշիչների մասով:

Մակրո-տնտեսական ցուցանիշներ. ՀՀ կառավարությունը ներկայացրեց Հայաստանի ընթացիկ մակրո-տնտեսական իրավիճակի մանրամասն վերլուծությունը և պարզաբանեց, որ բազմաթիվ ոլորտներում հաջողություններ են գրանցվել: ԱՄՆ կառավարությունը կարևորեց այն, որ ՀՀ կառավարության պատրաստ է զարգացման նոր փուլի համար, մասնավորապես այն պարագայում, երբ Համաշխարհային բանկի ծրագրերը ոչ-արտոնյալ վարկավորման ուղղվածություն են ստանում: ԱՄՆ կառավարությունը շեշտեց այս նոր փուլի անցման ընթացքում հարկերի հավաքագրման լավ ցուցանիշների պահպանման կարևորությունն ու կոնկրետ առաջարկներ ներկայացրեց ներմուծվող որոշ ապրանքների նկատմամբ ԱԱՀ-ից ազատված լինելը վերացնելու, սոցիալական վճարումների կատարումը տնտեսավարող սուբյեկտ հանդիսացող հարկատուների կողմից հեշտացնելու ու կեղծ ապրանքագրեր ներկայացնելու դեպքում նախատեսվող պատժամիջոցների խոստացան վերաբերյալ:

Ֆինանսաբանկային ոլորտ. ԱՄՆ կառավարությունը բարձր գնահատական տվեց ՀՀ Կենտրոնական բանկին (ՀՀ ԿԲ) բանկային ոլորտի վերջին հաջողությունների կապակցությամբ ու խրախուսեց ՀՀ կառավարությանը շարունակել կորպորատիվ կառավարման ու բանկերի գործունեության վերահսկման բարելավումները: ՀՀ ԿԲ նախագահը բացատրեց, որ Հայաստանը շարժվում է դեպի գնաճի նպատակադրում ու ողջունեց միջազգային չափորոշիչներին հասնելուն ուղղված ԱՄՆ աջակցությունը: ՀՀ կառավարությունը խնդրեց աջակցել լրացուցիչ օտարերկրյա ներդրումներ ներգրավելու, մասնավորապես միջազգային ճանաչում ունեցող ապահովագրական ընկերություններին դեպի շուկա ներգրավելու հարցում: ԱՄՆ կառավարությունը նշեց, որ մեծ ընկերություններին դեպի Հայաստանի համեմատաբար փոքր շուկան ներգրավելը դյուրին չի լինելու և նկատեց, որ ԱՄՆ ՄԶԳ Ֆինանսական ոլորտի խորացման ծրագիրը

նախատեսված է այս կարգի խնդրանքներին աջակցելուն ու Հայաստանում ֆինանսական միջնորդության կիրառման մեծացմանը:

Մաքսային ոլորտ. ԱՄՆ կառավարությունն իր գոհունակությունը հայտնեց հարկային բարեփոխումների ծրագրի շրջանակում համագործակցելու հարցում Պետական հարկային ծառայության պատրաստակամության վերաբերյալ և կոչ արեց ՀՀ կառավարությանը՝ ապահովել մեծածավալ տեղեկատվության համատեղ օգտագործում Հարկային ծառայության ներսում: ԱՄՆ կառավարությունը նշեց, որ ԱՄՆ ՄԶԳ «մաքսային ախտորոշման» ուսումնասիրությունը Պետական մաքսային կոմիտեին է ներկայացվել 2006թ. հունվարին ու հետաքրքրվում էր, թե երբ կարող են ակնկալել դրա վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխանը: ՀՀ կառավարությունը հավաստիացրեց, որ մոտ օրերս պատասխանը կլինի: Կողմերը քննարկեցին ուղղակի մուտքագրման համակարգի (Direct Trader Input) ներդրումը մաքսային գործընթացում: ՀՀ կառավարությունը հավաստիացրեց, որ այս ոլորտում Համաշխարհային բանկի հետ միասին իրականացվում է փորձնական ծրագիր: Ամերիկյան կողմը ՀՀ կառավարությանը կոչեց հրաժարվել հավաքագրման սահմանաչափի կիրառումից և այդ առնչությամբ առաջարկեց հանդիպում կազմակերպել ՀՀ կառավարության ու մյուս շահագրգիռ կողմերի միջև մաքսային ախտորոշման արդյունքներն ու մաքսային բարեփոխումները քննության առնելու նպատակով:

> **ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ.** ԱՄՆ ՄԶԳ-ին ներկայացնել իրենց պատասխանը «մաքսային ախտորոշման» ուսումնասիրության վերաբերյալ: 2006թ. հունիսի 23-ի դրությամբ Մաքսային կոմիտեն այն դեռ չէր ներկայացրել:

Մաքսային խնդիրներ. ԱՄՆ կառավարությունն առաջ քաշեց կոնկրետ հարց՝ կապված Կադաստրի համակարգչային սերվերների մաքսազերծման հետ: ՀՀ կառավարությունը հայտնեց, որ մաքսազերծման հետ կապված ձգձգումները պայմանավորված են փաստաթղթերում առկա խնդիրներով ու նշեց, որ պատրաստ է շուտափույթ քայլեր ձեռնարկել՝ խնդիրն արագ կարգավորելու նպատակով:

> **ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ.** Աջակցել ԱՄՆ կառավարության աջակցության ներմուծման հետ կապված խնդիրների արագ կարգավորմանն ու ապահովել երաշխիքներ, որ ԱՄՆ աջակցությունը հետ

կապված մաքսային ձևակերպումները մաքսերից ազատ ռեժիմով կկատարվեն առանց հապաղումների:

Օտարերկրյա ներդրումներ ու ՓՄՁ զարգացում. ՀՀ կառավարությունն անդրադարձավ Հայաստանում փոքր ու միջին բիզնեսի զարգացման ոլորտի նշանակալի առաջընթացին: ՀՀ կառավարությունը սակայն նկատեց, որ ամերիկյան ուղղակի ներդրումներն Հայաստանում անկում են ապրել, ու ներկայումս կազմում են օտարերկրյա ներդրումների ընդամենը 6%-ը: ՀՀ կառավարությունը նշեց, որ ԱՄՆ կառավարության ներդրումների գերակշիռ մասը բարձր տեխնոլոգիաների ու տուրիզմի ոլորտներում է ու հավելեց, որ չնայած այն հանգամանքին, որ սրանք խոստումնալից ներդրումային ոլորտներ են, ներդրումների քանակը մեծ չէ: ԱՄՆ կառավարությունն իր գոհունակությունը հայտնեց ՀՀ կառավարության ազատական ներդրումային միջավայրի համար, սակայն նշեց, որ կոռուպցիայի հետ կապված խնդիրները սահմանափակում են օտարերկրյա ներդրումները: ՀՀ կառավարությունը համաձայնեց, որ այդ հարցերը փոխկապակցված են նշելով, որ բոլոր մակարդակներում զգացվում է առաջընթացի կարիք կոռուպցիայի դեմ պայքարի մասով:

Հեղինակային կամ մտավոր սեփականության իրավունք. ԱՄՆ կառավարությունը գոհունակություն հայտնեց ոստիկանության կողմից հեղինակային իրավունքի խախտումներ ցույց տվող անձանց նկատմամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ և կոչ արեց ՀՀ կառավարությանը խստորեն, հավասարապես ու ամենուր կիրառել Հեղինակային իրավունքի մասին օրենքը: ՀՀ կառավարությունը նշեց, որ ՀՀ օրենքները համապատասխանում են ԹՐԻՓՍ-ի (ԱՀԿ համաձայնագիրը Առևտրին առնչվող մտավոր սեփականության իրավունքների մասին) պահանջներին, սակայն զգացվում է կիրարկման լրացուցիչ գործողությունների կարիք: ՀՀ կառավարությունը հայտնեց հեղինակային իրավունքի մասին նոր, առավել խիստ օրենք ներդնելու իր ծրագրերի մասին ու այս հարցում խնդրեց ԱՄՆ
կառավարության աջակցությունը:

ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. հեղինակային իրավունքի մասին առավել խիստ օրենսդրություն ներկայացնել ու հետամուտ լինել, որ այն ընդունվի:

ԱՄՆ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. ՀՀ կառավարության ցանկության դեպքում դիտարկել օրենքն ու շարունակական

աջակցություն ցուցաբերել իրավական ու իրավապահ կառույցներին այս հարցի շուրջ:

Գյուղատնտեսական աջակցություն. ԱՄՆ կառավարությունն անդրադարձավ Հայաստանին ցուցաբերվող գյուղատնտեսական աջակցության իր շարունակական ծրագրերին: ՀՀ կառավարությունը հայտնեց, որ սննդի անվտանգության մասին նոր օրենք է ներդրվելու ու խնդրեց ԱՄՆ կառավարության աջակցությունը սննդի անվտանգության ազգային լաբորատորիա ստեղծելու հարցում: ՀՀ կառավարությունը հարցրեց, արդյոք աղացած սոյան կարող է ներառվել հետագա դրամայնացման ծրագրերում: ԱՄՆ կառավարությունը նշեց, որ այդ խնդրանքին արձագանքելը դժվար է , բայց ոչ անհնար, ու երկու կողմերը համաձայնեցին այդ հարցը քննության առնել առանձին:

ԱՄՆ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. պարզել եթե աղացած սոյան կարող է ներառվել դրամայնացման ծրագրերում:

ԱՄՆ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. ուսումնասիրել Հայաստանին սննդի անվտանգության լաբորատորիայի ձևավորման հարցում աջակցելու հնարավորությունը:

Ջրային ռեսուրսների կառավարում. ԱՄՆ կառավարությունն առաջարկեց քննության առնել Բնապահպանության նախարարության բազմաթիվ տեղական գրասենյակների ու լաբորատորիաների համախմբման հնարավորությունն՝ ըստ Ավազանի կառավարման մոդելի: ԱՄՆ կառավարությունն առաջարկեց ՀՀ կառավարությանը քննության առնել ջրային ռեսուրսների կառավարման բարելավման ֆինանսավորումը՝ վճարների օգտագործման ավելացման միջոցով: ՀՀ կառավարությունը համաձայնեց քննության առնել այդ առաջարկն ու շնորհակալություն հայտնեց ԱՄՆ կառավարությանը ջրային ռեսուրսների կառավարման ասպարեզում աջակցելու համար: ՀՀ կառավարությունը բացատրեց, որ խմելու ջրի հետ կապված ծախսերի վերականգնման խնդիր չկա, բայց ոռոգման ջրի հետ կապված խնդիրներ կան՝ կապված ոռոգման շրջանում ջուրը կտրելու հետ: ՀՀ կառավարությունը նշեց, որ Հազարամյակի մարտահրավեր ծրագիրը կնվազեցնի ծախսերն այս ոլորտում ու ավելացրեց, որ մինչև Հազարամյակի մարտահրավեր ծրագրի ավարտը նախատեսվում է պահպանել վարձավճարների հավաքագրման նույն մակարդակը: ՀՀ կառավարությունը նաև հայտնեց, որ սկսել է խոշոր պարտապանների ցուցակի հրապարակումը՝ նպատակ ունենալով ավելացնել հավաքագրվող միջոցները:

Գյուղի զարգացում. ԱՄՆ կառավարությունը նշեց, որ աղքատության կրճատումը գյուղական բնակավայրերում ներառված է ԱՄՆ կառավարության շատ ծրագրերում: ԱՄՆ կառավարությունն առաջարկեց իր փորձը կիսել «Այ-Ար-Դիի» հետ, եթե ՀՀ կառավարության աշխատանքներն այս ճակատում առաջ գնան, ու համաձայնեց ուղիներ գտնել, որոնք կապահովեն, որ ընթացիկ ծրագրերը լրացնեն ՀՀ կառավարության այդ աշխատանքներին:

Թռչնագրիպ. ԱՄՆ կառավարությունը շնորհակալություն հայտնեց ՀՀ կառավարությանը այս հարցում համագործակցելու համար ու մանրամասնեց այս աշխատանքներում ՀՀ կառավարությանն աջակցելու իր հետագա ծրագրերը: Ընդհանուր առմամբ Հայաստանում թռչնագրիպի դեմ միջոցների ձեռնարկման համար նախատեսվում է ավելի քան 2.5 մլն ԱՄՆ դոլար: ԱՄՆ կառավարությունը կարևորեց Հայաստանում ակտիվ հետազոտությունների համակարգին անցնելը, այդ թվում էքսպրես տեստերի օգտագործումը մարզային մակարդակում: ԱՄՆ կառավարությունը նաև խրախուսեց մեծացնել մարդկանց հետազոտությունները՝ հայտնաբերելու թռչնագրիպի հնարավոր դեպքերը: ՀՀ կառավարությունը բացատրեց, որ ֆերմերները որոշել են վերացնել իրենց ունեցած թռչնագլխաքանակը ու հայտնեց, որ առաջիկա ամիսներին կարող է լինել թռչնաբուծական տնտեսությունների վերակազմավորում: ՀՀ կառավարությունը կրկին անդրադարձավ սննդի անվտանգության լաբորատորիայի իր վաղ ներկայացրած խնդրանքին: Մարդկանց առողջության տեսանկյունից ՀՀ կառավարությունը շնորհակալություն հայտնեց ԱՄՆ կառավարությանը տրամադրված պաշտպանական արտահագուստի ու սարքավորումների համար: Առողջապահության նախարարությունն աջակցություն խնդրեց երեք ախտորոշիչ լաբորատորիաների ու ցամաքային սահմանի երկայնքով գտնվող կարանտինային տարածքների վերանորոգման համար:

ԱՄՆ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. շարունակել սերտորեն աշխատել գյուղատնտեսության ու առողջապահության նախարարությունների հետ թռչնագրիպի դեմ պայքարի պատրաստվածությունը բարելավելու համար:

Էներգետիկ անվտանգություն ու Հայաստանի ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) փակում. ՀՀ կառավարությունը հայտնեց, որ ՀԱԷԿ-ի փակման մասին իր դիրքորոշումը չի փոխվել, և փակումը պայմանավորված է ներկայումս ատոմակայանում արտադրվող հոսանքը փոխարինելու համար էներգիայի այլընտրական աղբյուրներ գտնելու հետ:

Էներգետիկայի նախարարությունն անդրադարձավ այս ճակատում առկա նախաձեռնություններին, այդ թվում՝ Հայաստանի կողմից իրականացվող նոր գազատարի կառուցմանը, վերականգնվող էներգիայի ծրագրերին, մասնավորապես՝ հիդրոէլեկտրակայանների ու քամուց էներգիայի ստացման ծրագրերին: ՀՀ կառավարությունը բացատրեց, որ չունի բավարար ռեսուրսներ ֆինանսավորելու թե փակումը, թե փոխարինող հզորությունների ձևավորումը, ուստի ակնկալում է միջազգային դոնորների աջակցությունը: ՀՀ կառավարությունը նշեց, որ ՀԱԷԿ-ին փոխարինող հզորությունների մասին ռազմավարական զեկույցը պատրաստ է և թարգմանվելուն պես կներկայացվի ԱՄՆ կառավարությանը:

ԱՄՆ կառավարությունն ընդունեց, որ Հայաստանին անհրաժեշտ են էներգիայի հուսալի աղբյուրներ: ԱՄՆ կառավարությունը սակայն մտահոգություն հայտնեց գազի գների վերջին բարձրացմանը հաջորդած համաձայնագրերի թափանցիկության վերաբերյալ: ԱՄՆ կառավարությունը շեշտեց, որ այդպիսի համաձայնագրերի կառավարման հարցում կարևոր դեր ունի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: ՀՀ կառավարությունը բացատրեց, որ գոհ է վերջերս Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկը Ռուսաստանին վաճառելու համաձայնագրից ու նշեց, որ թե 5-րդ էներգաբլոկի, թե Իրանի հետ ունեցած գազատարի հարցում գերական ոչ թե այն է, թե ում են պատկանում ենթակառուցվածքները, այլ այն, որ ծառայությունները մատուցվում են:

ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. ԱՄՆ կառավարությանը տրամադրել ՀԱԷԿ-ը փոխարինող կառույցների մասին ռազմավարական զեկույցը:

Օգնություն դատական համակարգին. Ամերիկյան կողմը կարևորեց անհատի քաղաքացիական ազատությունները հարգելու անհրաժեշտությունը, մասնավորապես նախնական կամ վարչական կալանքի տակ գտնվող, ինչպես նաև այն անձանց նկատմամբ, որոնց մեղադրանք է առաջադրված: ՀՀ կառավարությունը նշեց, որ Ազգային ժողովին է ներկայացված դատական համակարգի բարելավման մասին նոր օրինագիծ: ՀՀ Արդարադատության նախարարությունը շեշտեց այս ոլորտի ֆինանսավորման ավելացման անհրաժեշտությունը, մասնավորապես՝ դատավորների աշխատավարձի բարձրացումը: Նախարարն ասաց, որ լրացուցիչ աջակցության կարիք է զգացվում, մասնավորապես քրեակատարողական հիմնարկների աշխատողների վերապատրաստման մասով:

Գիտություն և կրթություն. ԱՄՆ կառավարությունը հայտնեց, որ ԱՄՆ ՄԶԳ-ը նախատեսում է առավել համակարգված աջակցել ՀՀ հանրակրթական ու միջնակարգ կրթության համակարգերին: ՀՀ կառավարութունը խնդրեց լրացուցիչ աջակցություն Հայաստանի գիտության ոլորտի ռազմավարության մշակման հարցում որպես ԱՄՆ կառավարության կողմից այս ոլորտում իրականացված հետազոտության հետագա քայլ: ԱՄՆ կառավարությունը նշեց, որ հետազոտությունը այս հարցի հետագա մշակման ուղենիշ-քարտեզն էր ու համաձայնեց շարունակել համագործակցությունը ՀՀ կառավարության հետ գիտության ու կրթության խնդիրների շուրջ:

Դպրոցների փոխկապակցման ծրագիր. ԱՄՆ կառավարությունը խնդրեց ՀՀ կառավարությանը բյուջեում առանձին տող ներառել այս ծրագրի հետագա կենսունակությունը երաշխավորելու նպատակով: ՀՀ կառավարությունը նշեց, որ լրջորեն է վերաբերում այս ծրագրին ու ներկայումս առկա ֆինանսավորումը լավ հիմք է հանդիսանում ծրագրի հետագա ընթացքն ապահովելու համար:

> **ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ.** ՀՀ կառավարությունը համաձայնեց ապահովել շարունակական ֆինանսավորում այս ծրագրի համար:

Մարդկանց թրաֆիքինգ. ՀՀ կառավարությունը հայտնեց, որ մարդկանց թրաֆիքինգի հոդվածի հատկանիշներով հետաքննված գործերի թիվն հասել է 13-ի, մինչդեռ նախորդ տարում այդ հոդվածի հատկանիշներով միայն մեկ գործ կար: ՀՀ կառավարությունը ներկայացրեց այս հարցի շուրջ հարևան երկրների ու ԵԱՀԿ հետ իր համագործակցությունը: ԱՄՆ կառավարությունը շնորհակալություն հայտնեց ՀՀ կառավարությանը այս հարցի շուրջ կատարած աշխատանքի համար, սակայն նշեց, որ երկրների եռաստիճան դասակարգման սանդղակում Հայաստանը տեղ է զբաղեցրել 2-րդ խմբի հատուկ վերահսկման ցուցակում: ԱՄՆ կառավարությունը կոչեց ՀՀ կառավարությանը կատարել լրացուցիչ կոնկրետ քայլեր մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում՝ մասնավորապես կարգավորելով բողոքարկման ժամանակ դատավորների կողմից պատժի մեղմացման խնդիրն ու մարդկանց թրաֆիքինգի բոլոր գործերով հետապնդումը իրականացնելով 132 հոդվածի հատկանիշներով: ԱՄՆ կառավարությունը նշեց, որ մանրամասն առաջարկներ է ներկայացրել ՀՀ կառավարությանը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը բարելավելու վերաբերյալ: ՀՀ կառավարությունը նշեց, որ

ներկայումս Արդարադատության նախարարությունը վերանայում է հակաթրաֆիքինգային օրենսդրությունն ու նշեց այդ ուղղությամբ ձեռնարկված մի շարք քայլեր, այդ թվում և կանխարգելման ասպարեզում:

ԱՄՆ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. հակաթրաֆիքինգային օրենսդրության կիրառման հարցում աջակցություն ցուցաբերել ՀՀ կառավարությանը:

ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. շարունակել աշխատանքը հակաթրաֆիքինգային օրենսդրության ու կիրարկման հարցերի շուրջ, ինչպես նաև մշակել կոնկրետ ծրագրեր թրաֆիքինգի կանխարգելման ասպարեզում:

Իրավապահ ոլորտի բարեփոխումներ. ՀՀ կառավարությունը հայտնեց, որ Ազգային ժողովն ընդունել կամ ընդունում է մի շարք իրավական բարեփոխումներ, իսկ Դատահիրավական բարեփոխումների հանձնաժողովը մշակում է առաջարկվող փոփոխությունների փաթեթը, որը հանրությանը կներկայացվի աշնանը:

ԱՄՆ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. ցուցաբերել շարունակական փորձագիտական խորհրդատվություն ու աջակցություն այդ բարեփոխումների շուրջ:

ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. Դատահիրավական բարեփոխումների հանձնաժողովը մշակում է միջազգային չափորոշիչներին (հիմնականում ԵԽ չափորոշիչներին) համահունչ առաջարկվող փոփոխությունների փաթեթ՝ աշնանը հանրությանը ներկայացնելու նպատակով:

Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում. ՀՀ կառավարությունը բացատրեց, որ դիմում է ներկայացրել Էգմոնտ խմբին ու պատրաստում է փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենսդրության փոփոխությունների փաթեթ՝ ըստ ՄԱՆԻՎԱԼ-ի առաջարկների: ՀՀ կառավարությունը խնդրեց ԱՄՆ կառավարության աջակցությունը Էգմոնտ խմբի իր դիմումին (այն պաշտոնապես հովանավորում է Ռուսաստանը) սատարելու հարցում և Հայաստանի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի հզորությունների ձևավորման հարցում՝ ապահովելով վերապատրաստում փողերի լվացման գործերի հետաքննման ու քրեական հետապնդման վերաբերյալ ու

աջակցություն ցուցաբերելով փողերի լվացման դեմ պայքարի ազգային ցանց ու գրադարան ստեղծելու գործում:

ԱՄՆ կառավարության կողմից ձեռնարկվելիք գործողություններ. Ուսումնասիրել և Հայաստանի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի հզորացման ուղիներն ու խորացնել հայ հետաքննիչների ու դատախազների կարողությունները փողերի լվացմանն ու ահաբեկչության ֆինանսավորմանն առնչվող գործերի արդյունավետ վարման ասպարեզում:

Աջակցության աշխատանքային անվտանգության ասպարեզում. ՀՀ կառավարությունը տեխնիկական ու ֆինանսական աջակցություն խնդրեց ԱՄՆ կառավարությունից Հայաստանի արդյունաբերական ոլորտում տեխնիկական անվտանգության նորմերի վերահսկումը բարելավելու հարցում: ԱՄՆ կառավարությունը հայտնեց, որ Աշխատանքի նախարարության հետ աշխատում է նմանատիպ ծրագրի շուրջ ու պատրաստ է անհրաժեշտության դեպքում դիտարկել հնարավոր աջակցության այլ ուղիներ:

Աշխատանքային խմբի նիստերը տեղի են ունենում տարին երկու անգամ՝ գարնանը Երևանում, և աշնանը՝ Վաշինգտոնում:

Այս տարի աշխատանքային խմբի հայկական կողմի համանախագահ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վ.Խաչատրյանի խնդրանքով Վաշինգտոնում կայանալիք հերթական լիագումար նիստը հետաձգվել է:

2006թ. նոյեմբերի 7-ին աշխատանքային այցով Հայաստան է ժամանել աշխատանքային խմբի ամերիկյան համանախագահ ԱՄՆ պետքարտուղարության Եվրոպայի և Եվրասիայի երկրներին ԱՄՆ կառավարական օժանդակության համակարգող Թոմ Ադամսը, ով հանդիպել է ՀՀ Նախագահ Ռ.Քոչարյանին, Վարչապետ Ա.Մարգարյանին և կառավարական այլ մարմիններին:

Հանդիպումների ընթացքում ի թիվս երկկողմ հարաբերություններին առնչվող հարցերի՝ քննարկվել են նաև հայ-ամերիկյան աշխատանքային խմբի օրակարգի հարցերը:

- **Ֆինանսական և տեխնիկական համագործակցության <u>հայ-գերմանական</u> միջկառավարական հանձնաժողով**

2006թ. մարտի 21-22-ը տեղի ունեցավ Ֆինանասական և տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովի երկօրյա

խորհրդակցությունը, որը նախագահում էին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը և ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության ներկայացուցիչ Ռոլֆ Բալդուսը:

Երկօրյա խորհրդակցության արդյունքում ստորագրվեց արձանագրություն՝ Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնության Հանրապետության միջև զարգացմանն ուղղված երկկողմ համագործակցության շուրջ:

Խորհրդակցությունների ընթացքում քննարկվեցին գործող հետևյալ ծրագրերը.

1. Կայուն տնտեսական ռազմավարություն
2. Կովկասյան նախաձեռնության շրջանակներում իրականացվող զարգացումային համագործակցության ծրագրեր
3. Ժողովրդավարություն, քաղաքացիական հասարակություն և հանրային կառավարում (Համայնքային զարգացում, ենթակառուցվածքների վերականգնման միջոցառումներ)
4. Տարբեր ոլորտներ ընդգրկող ծրագրեր / Ուսումնասիրությունների և մասնագետների հիմնադրամ

Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնության Հանրապետության կառավարությունների միջև համագործակցության ծրագրերը սկիզբ են առել 1993թ.՝ սկզբում միայն որպես տեխնիկական, այնուհետև սկսած 1995թ.՝ նաև ֆինանսական համագործակցության ծրագրեր: 2001թ. միջկառավարական բանակցություններից հետո իրականացվում են նաև տարածաշրջանային ծրագրեր՝ «Կովկասյան նախաձեռնության» շրջանակներում:

Հայ - գերմանական ֆինանսական համագործակցությունը կենտրոնացած է երեք հիմնական ոլորտներում՝ էներգետիկա, ֆինանսական/մասնավոր հատված, ջրամատակարարում և ջրահեռացում: Իրականացվում են նաև համեմատաբար փոքրածավալ դրամաշնորհային ծրագրեր՝ առողջապահության և բնապահպանության ոլորտներում:

Բացի երկկողմ ծրագրերից, 2001թ. սկսվել են նաև նորաստեղծ «Կովկասյան նախաձեռնության» տարածաշրջանային ծրագրերը, որոնք ընդգրկում են Հարավային Կովկասի երեք երկրներում ինչպես ֆինանսական, այնպես էլ տեխնիկական համագործակցության ծրագրեր՝ էներգետիկայի և մասնավոր ձեռնարկատիրության բնագավառներում, տուբերկուլյոզի դեմ պայքարի, ինչպես նաև կենսաբազմազանության պաշտպանության ոլորտներում: Հայ-գերմանական համագործակցության

շրջանակներում արդեն իսկ նախատեսվում է իրականացնել հիպոտեքային շուկայի զարգացմանն ուղղված ծրագրեր:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ ապագա համագործակցությունը կողմնորոշված կլինի երկկողմ և միջտարածաշրջանային զարգացման համագործակցության՝ համատեղ որոշված առաջնահերթ ոլորտներին:

Հայկական կողմը զարգացմանն ուղղված համագործակցության շրջանակներում ներկայացրեց հետևյալ առաջարկները.

1. Գյումրի 2 ենթակայանի վերակառուցում (Էներգետիկայի նախարարություն)
2. Աջակցություն միջհամայնքային համագործակցությանը (Տարածքային կառավարման նախարարություն)
3. Արդարադատության ոլորտում իրականացվող խորհրդատվության շարունակում (Արդարադատության նախարարություն)
4. «Գործընկերության եւ համագործակցության մասին» համաձայնագրի իրականացմանն ուղղված միջոցառումներին աջակցություն ցուցաբերելու հնարավորություններ (Արդարադատության նախարարություն)
5. Բնապահպանության ոլորտում InWent-ի գործունեության ընդլայնում (Բնապահպանության նախարարություն)
6. Աջակցություն բնակարանային տնտեսության պահպանման և վերականգնման նպատակով օրենսդրական դաշտի բարելավման գործում (Արդարադատության նախարարություն)
7. Աջակցություն «Սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողերի խոշորացում» ծրագրի իրականացման գործում (Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե)
8. Օժանդակություն «Կոշտ կենցաղային թափոնների կառավարման ազգային ծրագրի» մշակման և իրականացման գործում

2006թ. մարտի 3-ին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում KfW-ի պատվիրակության հետ, որի ընթացքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի և Հայաստանում ԳԴՀ դեսպան տիկին Փայչի միջև ստորագրվել է «ԳԴՀ կառավարության և ՀՀ կառավարության միջև 2005-2006թթ.

ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը (8 մլն եվրո վարկ, 3.7 մլն եվրո դրամաշնորհ):

Ընդհանուր առմամբ Հայ-գերմանական ֆինանսական համագործակցության շրջանակներում մինչ օրս Հայաստանին տրամադրվել է մոտ 195 մլն. եվրո:

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական հանձնաժողով

Ս.թ. հունվարի 31-ից փետրվարի 1-ը Թեհրանում տեղի է ունեցել հայ- իրանական կապերի կոորդինացման միջկառավարական հանձնաժողովի վեցերորդ համատեղ նիստը: Նիստը գլխավորում էին հանձնաժողովների համանախագահներ՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար պրն. Ա. Թումանյանը և ԻԻՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար պրն. Դ. Ջաֆարին:

Նիստի արդյունքում ստորագրվել են հետևյալ փաստաթղթերը.

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության Կառավարության միջև կրթական և մշակութային կենտրոնների հիմնման և գործունեության պայմանների մասին» Փոխըմբռնման հուշագիր:

«Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջև արխիվային գործի ոլորտում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագիր:

«Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության կապերի կոորդինացման միջկառավարական հանձնաժողովի վեցերորդ համատեղ նիստի մասին» Փոխըմբռնման հուշագիր:

« Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և Իրանի Իսլամական Հանրապետության ռադիոհեռուստատեսության կազմակերպության միջև» Փոխըմբռնման հուշագիր:

ՀՀ Վարչապետի ս.թ. մարտի 7-ի թիվ 164-Ա որոշմամբ փոփոխություն է կատարվել հայ-իրանական միջկառավարարական համատեղ հանձնաժողովի հայկական մասի կազմում: Հանձնաժողովի համանախագահ է նշանակվել ՀՀ էներգետիկայի նախարար պրն. Արմեն Մովսիսյանը:

Ս.թ. ապրիլի 12-ից հայ- իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի իրանական մասի պատասխանատվությունը ստանձնել է ԻԻՀ ԱԳՆ , իսկ քարտուղարության աշխատանքները համադրելու է ԱՊՀ երկրների 1-ին վարչությունը:

Հանձնաժողովի համանախագահ է նշանակվել ԻԻՀ ԱԳ նախարար պրն. Մանուչեհր Մոթթաքին:

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Տարվա ընթացքում տեղի են ունեցել ԻԻՀ /փետրվարի 14-ին/ և ՀՀ /դեկտեմբերի 17-ին/ արտգործնախարարների աշխատանքային փոխայցելությունները: Արտաքին գերատեսչությունների ղեկավարները երկու երկրների քաղաքական վերնախավի հետ հանդիպումների և բանակցությունների ընթացքում բարձր են գնահատել երկկողմ առկա հարաբերությունների մակարդակը, որակել են գոյություն ունեցող ներուժը, հնարավորություններն ու կարողությունները, դրանք օգտագործելու անհրաժեշտությունը: Երկկողմ օրակարգին զուգահեռ քննարկվել են տարածաշրջանային երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, նախանշել ապագա համագործակցության խնդիրները:

2006թ-ին Թեհրանում և Երևանում կայացել են նաև ՀՀ և ԻԻՀ արտգործնախարարությունների հյուպատոսական ծառայությունների համատեղ երկրորդ /հունվարի 16-18-ը/ և երրորդ /նոյեմբերի 21-22-ը/ նիստերը: Արդյունքում ստորագրվել են համապատասխան Փոխըմբռնման հուշագրեր:

2006թ. հուլիսի 5-ից 6-ը երկօրյա աշխատանքային այցով ԻԻՀ է մեկնել ՀՀ Նախագահ Ռ.Քոչարյանի գլխավորած պատվիրակությունը:

Այցի արդյունքում ստորագրվել են .

ՀՀ Նախագահի և ԻԻՀ Նախագահի Համատեղ հայտարարությունը

ԻԻՀ զարգացման օգնություն ՀՀ-ին Փոխըմբռնման հուշագիրը

ՀՀ և ԻԻՀ միջև հանձնման Համաձայնագիրը,ՀՀ և ԻԻՀ միջև քաղաքացիական և քրեական գործերով իրավական համագործակցության մասին Համաձայնագիրը

ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և ԻԻՀ մշակութային ժառանգության և զբոսաշրջության կազմակերպության միջև

մշակութային ժառանգության բնագավառում (2006-2011թթ., համապատասխանաբար՝1385-1390) համագործակցության Ծրագիրը

ՀՀ էներգետիկայի նախարար, հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահ պրն Ա. Մովսիսյանի ՝ ԻԻՀ կատարած այցի վերաբերյալ Փոխըմբռնման հուշագիրը

Բարձրավոլտ էլեկտրահաղորդման երրորդ գծի ֆինանսավորման պայմանագրին կից կապալի Պայմանագիրը

ՀՀ էներգետիկայի նախարարության և ԻԻՀ արտահանման և զարգացման բանկի միջև բարձրավոլտ էլեկտրահաղորդման երրորդ գծի ֆինանսավորման Պայմանագիրը:

ՀՀ էներգետիկայի նախարարություն

Էլեկտրահաղորդման երրորդ գիծ – Ս/թ մայիսի 17-ին ՀՀ էներգետիկայի նախարարության և ԻԻՀ արտահանման զարգացման բանկի միջև ստորագրվել է 400 ԿՎ լարումով էլեկտրահաղորդման երրորդ գծի և համապատասխան ենթակայանի կառուցման վերաբերյալ ֆինանսական համաձայնագիր: 2006թ. հունիսին Երևանում կայացած բանակցությունների ընթացքում ԻԻՀ կողմից Սանիր ընկերության և ՀՀ կողմից ԲԷՑ ընկերության ներկայացուցիչների միջև վերոնշյալ էլեկտրահաղորդման գծի EPC պայմանագրի նախագծի վերաբերյալ սկզբունքային համաձայնություն է ձեռք բերվել, և պայմանագրի նախագիծը նախապատրաստվել է ստորագրման: Այն նախատեսվում է ստորագրել 2006թ. հուլիսի սկզբին/ արդեն ստորագրվել է/:

2006թ. մայիսի 16-17-ը ՀՀ էներգետիկայի նախարար պրն. Ա. Մովսիսյանի գլխավորած պատվիրակության ԻԻՀ կատարած այցի ընթացքում կողմերը պայմանավորվեցին էլեկտրացանցի երրորդ գիծը շարունակել այնպես, որպեսզի հնարավոր լինի ԻԻՀ էլեկտրացանցը միացնել նաև Վրաստանի էլեկտրացանցին: Այդ նպատակով հարցը կքննարկվի համապատասխան երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ կայանալիք եռակողմ խորհրդակցության ժամանակ:

Տարվա երկրորդ կիսամյակում ՀՀ էներգետիկային նախարարության պատասխանատուները «Սանիր» ընկերության հետ շարունակել են քննարկել Հայաստան- Իրան էներգոհաղորդման 1200 ՄՎտ հզորությամբ 3-րդ գծի շինարարության հետ կապված տեխնիկատնտեսական հարցերը: 3-րդ գծի երկարությունը Հայաստանի

տարածքում լինելու է 300կմ, իսկ Իրանի տարածքում՝ 100կմ, այն իր կարողություններով գերազանցելու է գործող երկու գծերի հզորությունները:

2006թ. սեպտեմբերի 28-29-ը ՀՀ էներգետիկայի նախարար Ա. Մովսիսյանի, ԻԻՀ էներգետիկայի նախարար Ս. Փ. Ֆաթթահի և Վրաստանի էներգետիկայի նախարար Ն. Գիլաուրիի գլխավորությամբ Երևանում կայացած եռակողմ բանակցությունների ընթացքում կողմերը համաձայնության եկան համապատասխան պայմանագրերի ստորագրումից հետո Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգի միջոցով էլեկտրաէներգիայի փոխհոսք իրականացնել Վրաստանի և Իրանի էլեկտրաէներգիայի համակարգերի միջև՝ միջինը 50 ՄՎտ հզորությամբ: Իրանական կողմը էլեկտրաէներգիա կառաքի 2006թ. դեկտեմբեր ամսից մինչև 2007թ. ապրիլ ամիսը, իսկ վրացական կողմը նույն քանակությամբ էլեկտրաէներգիա կվերադարձնի Իրանին 2007թ. մայիսից մինչև սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում: Նոր գծերի շահագործումը հնարավորություն կտա մշտական հիմունքներով իրականացնել նվազագույնը 350ՄՎտ հզորությամբ էլեկտրաէներգիայի փոխանակում Վրաստանի և Իրանի միջև: Կողմերն իրենց պատրաստակամությունն են հայտնել ռուսական կողմին այս գործընթացում ընդգրկելու և հաջորդ հանդիպմանը ռուսական կողմին հրավիրելու վերաբերյալ:

Հաջորդ եռակողմ հանդիպումը որոշվել է անցկացնել Թեհրանում երեք ամսվա ընթացքում /ի դեպ այս մասին քննարկումներ են եղել նաև ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի՝ ս.թ. դեկտեմբերի 17-ին Թեհրան կատարած այցի ընթացքում/:

<u>Արաքսի ՀԷԿ-երի շինարարություն</u> **-** Արաքս գետի հիդրոներուժի օգտագործման նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման իրանական կողմի մշակած արդյունքներից ելնելով, պայմանավորվածության համաձայն ՀՀ և ԻԻՀ էներգետիկայի նախարարությունների կողմից աշխատանքներ են տարվում ՀԷԿ-երի շինարարությունը սկսելու ուղղությամբ: 2006թ. մայիսի 16-17-ը ՀՀ էներգետիկայի նախարար պրն. Ա. Մովսիսյանի գլխավորած պատվիրակության ԻԻՀ կատարած այցի ընթացքում կողմերն իրենց գոհունակությունն էին հայտնել Արաքս գետի վրա կառուցվելիք ՀԷԿ-ի տեխնիկատնտեսական ուսունասիրություններին առնչվող աշխատանքների հաջող ընթացքի կապակցությամբ և համաձայնության էին եկել մինչև 2006թ. ավարտը ստորագրման նախապատրաստել ՀԷԿ-ի կառուցմանը վերաբերող միջպետական համաձայնագրի, ինչպես նաև ֆինանսական ու կապալի պայմանագրերի նախագծերը:

ՀՀ էներգետիկայի նախարարությունը գրությամբ դիմել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ վերոնշյալ համաձայնագրի ստորագրման համար սահմանված կարգով ՀՀ կառավարության հավանությունն ստանալու նպատակով: ՀՀ

Կառավարությունը /09.11.2006թ. համար 1598-Ա որոշումով/ համաձայնություն է տվել համաձայնագրի կնքման առաջարկությանը:

Նախատեսվում է կառուցել յուրաքանչյուրը 130-140 ՄՎտ հզորությամբ և տարեկան մոտ 800-840 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիայի արտադրությամբ երկու ՀԷԿ՝ Մեղրի ՀԷԿ-ը Հայաստանի տարածքում և Ղարաչիլար ՀԷԿ-ը Իրանի տարածքում: ՀԷԿ-երի կառուցման գործնական աշխատանքները կսկսվեն 2007թ-ին և կավարտվեն 6 տարվա ընթացքում:

<u>Արաքսի գետանց</u> - Մեղրիի սահմանակետում երկու երկրների շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել Իրան-Հայաստան գազամուղի Արաքսի գետանցի շինարարության և հունի փոփոխություններին նվիրված երեք հանդիպում /սեպտեմբերի 12-ին, 23-ին, 30-ին/: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նախատեսված աշխատանքների ավարտից հետո,Արաքսի գետի հունը համապատասխանեցնել 1957թ. միջպետական համաձայնագրով ամրագրված դիրքին: Այդ կապակցությամբ ԱԳՆ շինարարության ավարտից հետո գետի ափի ամրացման աշխատանքների իրականացման վերաբերյալ առաջարկ է ներկայացրել ՀՀ Կառավարությանը: Վերջինիս կողմից շահագրգիռ գերատեսչություններին համապատասխան հանձնարարականներ են ուղարկվել:

<u>Գազամուղի շինարարություն</u> - Հայկական մասում գազամուղի շինարարության աշխատանքները, ըստ ծրագրի գլխավոր կապալառու «Սանիր» ընկերության վերջին հաշվետվության, կատարված են 74.3, տոկոսով, և շինարարությունը նախատեսվում էր ավարտել մինչև 2006թ. դեկտեմբերի վերջը: Բնակլիմայական անբարենպաստ պայմանների պատճառով գազամուղի բացման հանդիսավոր արարողությունը նախատեսվում է կազմակերպել 2007թ. մարտի առաջին կեսին՝ երկու երկրների Նախագահների մասնակցությամբ /սույն պայմանավորվածությունը ձեռք է բերվել 2006թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի՝ Թեհրան կատարած այցի ընթացքում/:

Այլ - ԻԻՀ նավթի նախարարի տեղակալ Մ. Հ. Նեժադհոսեինիանի՝ 2006թ. օգոստոսի 30-ից սեպտեմբերի 2-ը Երևան կատարած պաշտոնական այցի ընթացքում քննարկվել են նավթավերամշակման ոլորտում համագործակցության հնարավորությունները և կողմերը պայմանավորվել են խնդրի հետագա հետազոտման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ:

Իրանական կողմը պատրաստակամություն է հայտնել դիտարկել հայկական կողմի ներդրումների մասնակցությունն իրանական նոր նավթամշակման գործարան(ներ)ում՝

նախատեսված Կենտրոնական Ասիայի և Կասպյան տարածաշրջանի նավթի վերամշակման համար:

Կողմերը համաձայնել են փորձի փոխանակում կատարել էներգախնայողության և էներգաարդյունավետության խնդիրներում և այս նպատակով պայմանավորվել են ապագայում կազմակերպել հանդիպումներ և գիտաժողովներ:

<u>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն</u>

ՀՀ նախագահը 06.03.2006թ. N ՆՀ-48-Ն հրամանագրով հաստատել է (վավերացրել է) «Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի մասին» միջկառավարական համաձայնագիրը: ԻԻՀ ԱԳՆ տեղեկացրել է, որ 03.04.2006թ. ՀՀ պաշտոնապես միացել է «Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքի մասին» միջկառավարական համաձայնագրին:

Հայկական կողմը իրանական կողմին է ներկայացրել երկու երկների միջև երկաթուղային գիծ կառուցելու նախագիծը: Ի պատասխան այդ առաջարկին՝ իրանական կողմը 2006թ. հունիսին ՀՀ ԱԳՆ միջոցով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից խնդրել է տրամադրել լրացուցիչ տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ և անցկացնել երկու երկրների փորձագետների համատեղ նիստ:

2006թ. ապրիլի 5-ի **N** 01-10/1469 գրությամբ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը դիմել էր ՀՀ ԱԳՆ՝ 6-րդ նիստի վերաբերյալ Փոխըմբռնման հուշագրի 4-4 կետի վերաբերյալ իրանական կողմի կոնկրետ առաջարկությունների ձեռք բերման հարցում միջնորդություն ցուցաբերելու նպատակով: Միայն 2006թ. հունիսին է իրանական կողմը ներկայացրել երկաթուղու ուղորտում փորձի փոխանակման իր առաջարկությունը: Այդ նպատակով իրանական կողմը խնդրել է ներկայացնել տեղեկատվություն ՀՀ երկաթգծի, վագոնների, շոգեքարշերի արտադրության և վերանորոգման, երկաթգծային տարբեր մեքենասարքավորումների պահանջարկի, կարողությունների և հզորությունների վերաբերյալ, ինչպես նաև վերոնշյալ բնագավառում ՀՀ հետագա ծրագրերի, ՀՀ կրթական կարողությունների, ուսումնական կենտրոններ բացելու հնարավորությունների վերաբերյալ: ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը իրանական կողմի հարցադրումը ներկայացրել է «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ին:

Հայկական կողմն առաջարկել էր աշխատանքային փորձագիտական հանդիպումներ անցկացնել դեռևս 2006թ. ապրիլի երկրորդ կեսին Երևանում: Սակայն վերոնշյալ նիստը կայացել է Երևանում 2006թ. հոկտեմբերի 16-ից 19-ը:

Հարցի ուսումնասիրման եղանակը հստակեցնելու նպատակով հանդիպման արդյունքում որոշվել էր ձևավորել աշխատանքային համատեղ խումբ՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ պարոն Հրանտ Բեգլարյանի և ԻԻՀ տեխնիկական հարցերի և երկաթգծի, օդանավակայանների և նավահանգիստների նախագծերի կառուցման և զարգացման գրասենյակի գլխավոր տնօրեն պարոն Փարվիզ Բիգդելու գլխավորությամբ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել 6 ամսվա ընթացքում քայլեր ձեռնարկել յուրաքանչյուրն իր երկրի տարածքում նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները կատարելու համար, որոնց արդյունքները և նոր առաջարկությունները /նախագծի իրագործման եղանակների ֆինանսական միջոցների հայթայթման վերաբերյալ/ կփոխանցվեն դիվանագիտական ուղիներով:

Այլընտրանքային ճանապարհի կառուցումն ու շինարարական աշխատանքները նախատեսվում էր ավարտել մինչև 2006թ. վերջը, սակայն աշխատանքների ծավալուն լինելու պատճառով դրանք դեռևս ընթացքի մեջ են և կավարտվեն 2007 թվականին:

Նոյեմբերի 21-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և «Հայճանշին» ընկերության նախաձեռնությամբ կայացել է Մեղրի-Շվանիձոր-Ծավ-Կապան ավտոճանապարհի առաջին հատվածի բացման հանդիսավոր արարողությունը: Առաջին հատվածում ասֆալտապատված է 20կմ,հողային աշխատանքներ են կատարվում 30կմ հատվածում, 4 կետերում շարունակվում են պայթեցման աշխատանքները: Մեղրի-Կապան էապես ավելի էժան ինքնարժեք ունեցող նոր ճանապարհի երկարությունը 91կմ է:

Երկու երկրների տարածքներից և տարանցիկ միջազգային փոխադրումների գործընթացի արագացման և դյուրացման նպատակով դեկտեմբերի 11-14-ը Երևանում կայացել է հայ-իրանական տրանսպորտային հարցերով համատեղ հանձնաժողովի առաջին նիստը: Արդյունքում ստորագրվել է ՀՀ և ԻԻՀ միջև ավտոմոբիլային տրանսպորտի հարցերով առաջին նիստի Փոխըբռնման հուշագիր :

«Արմավիա» և «Հայկական ավիաուղիներ» ընկերությունների՝ ԻԻՀ ավիացիայի կազմակերպությանը ունեցած պարտքերի հետ կապված խնդիրները անհրաժեշտ է կարգավորման հանձնել իրավասու մարմին հանդիսացող ՀՀ կառավարությանն առընթեր Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը:

Վեցերորդ նիստի ընթացքում պայմանավորվածություն էր ձեռք բերվել քննարկել հեռահաղորդակցության ոլորտում միմյանց տարանցիկ հնարավորությունների օգտագործման հարցերը, որի նպատակով համապատասխան գրություն է ուղարկվել «Արմենթել» ՀՁ ՓԲԸ և «Հայփոստ» ՓԲԸ:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն

Իրանական կողմը հայկական կողմին ներկայացրել էր «Ազատ առևտրի մասին» համաձայնագրի նախագիծը և պարտավորվել մեկ ամսվա ընթացքում բավարար տեղեկատվություն ներկայացնել արտաքին առևտուրը կարգավորող օրենսդրության վերաբերյալ: Հայկական կողմն այն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում պետք է ներկայացներ իր առաջարկությունները համաձայնագրի վերաբերյալ, որից հետո կողմերը դիվանագիտական ուղիներով պետք է շարունակեին բանակցությունները վերոնշյալ համաձայնագրի համաձայնեցման ուղղությամբ:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը, հաշվի առնելով երկկողմ պայմանավորվածությունների կարևորությունը, և այն, որ իրանական կողմից նշված ժամկետներում տեղեկատվությունը չի ստացվել, երկու անգամ 3.03.2006թ. 05-12/8-196 և 10.04.2006թ. 05-12/8-335 գրություններով դիմել է ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Ալիռեզա Հաղիղիանին՝ խնդրելով ցուցաբերել աջակցություն իրանական կողմից ստանալու պահանջվող տեղեկատվությունը: Քանի, որ անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվել է միայն ս/թ հունիսի 20-ին, համաձայնագրի վերաբերյալ նախարարության դիրքորոշումը իրանական կողմին կտեղեկացվի մոտակա ժամանակաշրջանում:

Ս.թ. փետրվարին իրանական կողմին տրամադրվել է Հայաստանում գործող ներդրումային օրենսդրության փաթեթը, սակայն իրանական կողմից փոխադարձ տեղեկատվություն չի ներկայացվել:

Իրան-Հայաստան Առևտրային պալատի խնդրանքով նախարարության կողմից տրամադրվել է Իրանից Վրաստան և հարակից երկրներ Հայաստանի տարածքով բեռնափոխադրությանն առնչվող օրենսդրության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև քաղվածք՝ «Ճանապարհային վճարի» մասին ՀՀ օրենսգրքից:

Իրանական «Ռոս Դարյայե Խազար» ընկերության կողմից 2006թ. մայիսի 19-27-ը Էնզելի քաղաքում կազմակերպվելիք ցուցահանդեսին Հայաստանի 10 ընկերությունների մասնակցության վերաբերյալ ստացվել է հրավերք-նամակ: Նշյալ գրությամբ իրանական

կողմը պատրաստակամություն էր հայտնել մասնակիցներին տրամադրել անվճար ցուցահանդեսային տարածք:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը 28.03.2006թ. 05-12/8-282 գրությամբ տեղեկացրել է Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությանը, Զարգացման հայկական գործակալությանը և առևտրաարդյունաբերական պալատին, սակայն նշյալ կազմակերպությունները չեն արձագանքել:

Նույն ընկերությունը ս.թ. սեպտեմբերի 22-29-ը Էնզելի քաղաքում կայանալիք ցուցահանդեսին մասնակցելու նպատակով հրավիրել է հայկական 5 ընկերությունների, որի վերաբերյալ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը ևս տեղեկացրել է վերոնշյալ ենթակառուցվածքներին: Իրանական կողմից ստացվել է նաև գրություն ս/թ օգոստոսի 31-ից սեպտեմբերի 3-ը Թեհրանում կայանալիք ԻԻՀ 4-րդ միջազգային ցուցահանդեսի մասնակցության վերաբերյալ, ինչի մասին նախարարությունը տեղեկացրել է շահագրգիռ կազմակերպություններին, սակայն մինչ օրս պատասխան չի ստացել:

2006թ. նոյեմբերի 3-ից 10-ը Երևանում Իրան-Հայաստան առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Լ. Ահարոնյանի հովանավորությամբ մեկնարկեց Իրան-Հայաստան առևտրաարդյունաբերական պալատի մասնավոր սեկտորի բնակարանաշինարարության մասնագիտացված երկրորդ ցուցահանդեսը:

2006թ. նոյեմբերի 9-ից 13-ը Երևան ժամանեց ԻԻՀ առևտրի նախարարի խորհրդական և ԻԻՀ մասնավոր սեկտորի աջակցության կազմակերպության նախագահի տեղակալ Բ. Աֆղահիի գլխավորած պատվիրակությունը՝ 20 իրանցի գործարարների ուղեկցությամբ:

Պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալի, Զարգացման հայկական գործակալության նախագահի, Երևանի քաղաքապետարանի և շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև ծանոթացել է Հայաստանի արտադրական հզորությունների հետ: Այցի արդյունքում ստորագրվել է ՀՀ և ԻԻՀ միջև առևտրի, մարքեթինգի և ներդրումների ոլորտում համագործակցության մասին Փոխըմբռնման հուշագիր:

Իրան-Հայաստան առևտրային պալատի խնդրանքով նախարարության կողմից տրամադրվել է Իրանից Վրաստան և հարակից երկրներ Հայաստանի տարածքով բեռնափոխադրությանն առնչվող օրենսդրության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև քաղվածք՝ «Ճանապարհային վճարի» մասին՝ ՀՀ օրենսգրքից:

Միաժամանակ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի առաջիկայում կայանալիք 7-րդ նիստի օրակարգում ներառելու նպատակով առևտրի և զարգացման նախարարությունն իր առաջարկություններն է ներկայացրել:

Առաջարկվում է քննարկել նեքոհիշյալ հարցերը՝

- « Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի նախագծի շուրջ բանակցային գործընթացի շարունակում
- Իրանում Հայաստանի առևտրական կենտրոնի ստեղծում
- Սյունիքի մարզում զբոսաշրջության ոլորտի ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրերի իրականացում
- «Մեծ մետաքսե ճանապարհ» Ծրագրի շրջանակներում զբոսաշրջության ոլորտի միացյալ կրթական ծրագրերի իրականացում:

<u>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</u>

Համաձայն իրանական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածության 2006թ. հուլիսի 17-20-ը նախատեսվում էր ԻԻՀ գյուղատնտեսության Ջիհադ նախարար Մոհամմադ Ռեզա Էսքանդարիի գլխավորած պատվիրակության այցը, որը սակայն հետաձգվեց:

Հաշվի առնելով, որ ԻԻՀ գյուղատնտեսության Ջիհադ նախարարի այցի ընթացքում նախատեսվում էր ստորագրել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև անասնաբուժության ոլորտում համագործակցության մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև բույսերի կարանտինի և ֆիտոսանիտարիայի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրերը, 2006թ. հուլիսի 3-6-ը իրականացել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատանքային խմբի գործուղումը Իրան՝ նշված համաձայնագրերի վերջնական համաձայնեցման և ստորագրման նախապատրաստման նպատակով / փաստաթղթերը նախաստորագրվել են/:

Նոյեմբերի 27-30-ը տեղի է ունեցել ԻԻՀ գյուղատնտեսության նախարար Մ. Էսքանդարիի գլխավորած պատվիրակության այցը Երևան: ԻԻՀ գյուղատնտեսության նախարարը բանակցություններ է ունեցել ՀՀ գյուղատնտեսության նախարար պրն

Դ.Լոքյանի հետ, քննարկվել են գյուղատնտեսության բնագավառում ստորագրված փաստաթղթերի իրականացման և համագործակցությունն ընդլայնելու հարցեր: ԻԻՀ նախարարին ընդունել են ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանը և վարչապետ Ա. Մարգարյանը:

Այցի արդյունքում ստորագրվել են հետևյալ փաստաթղթերը.

«Համաձայնագիր ՀՀ Կառավարության և ԻԻՀ Կառավարության միջև բույսերի պաշտպանության և բուսական կարանտինի բնագավառներում համագործակցության մասին»,

«Համաձայնագիր ՀՀ և ԻԻՀ միջև կենդանիների առողջության և անասնաբուժության բնագավառում համագործակցության մասին»,

«Փոխըմբռնման հուշագիր գյուղատնտեսության բնագավառում համագործակցության մասին»:

<u>ՀՀ բնապահպանության նախարարություն</u>

2006թ. մայիսի 20-21-ը Թեհրանում կայացել է ՀՀ և ԻԻՀ ներկայացուցիչների հանդիպումը, որտեղ քննարկվել են Արաքս գետի ջրային ռեսուրսների աղտոտվածության խնդիրները:

Կայացած նիստի ժամանակ կողմերը քննարկել են Մեղրի-Նորդուզ կամրջի վերին հատվածի հիդրոմետ կայանի կառուցման և գետի որակի նմուշառման կայանների հիմնման վերաբերյալ հարցեր:

Պայմանավորվածության համաձայն, ս/թ հունիսի 20-21-ը տեղի ունեցած կողմերի երրորդ սահմանային հանդիպման և Թավրիզ կատարած այցելության ժամանակ երկու կողմերի փորձագետները ստույգ որոշել են գետի որակի նմուշառման կայանների տեղանքը, սկզբից՝ ՀՀ կողմի Արաքս գետի ափամերձ տարածքում, հետո ԻԻՀ կողմի Արաքս գետի ափամերձ տարածքում, ինչպես նաև ջրի անալիզի ենթակա աղտոտող նյութերի ցանկը և նմուշառման հաճախականությունը, որոնց վերջնական հաստատումը, ըստ պայմանավորվածության, տեղի է ունեցել 2006թ. օգոստոսի 12-ից 17-ը Ծաղկաձորում: *Կազմվել է հանդիպման Արձանագրություն:*

Ներկայացվել է ջրի նմուշառման կետերի, նմուշառման հաճախականության ժամանակացույցի և անալիզի ենթակա աղտոտող նյութերի ցանկը:

Կողմերը առաջարկվող կետերի նմուշառման վերաբերյալ համաձայնության են եկել համատեղ մոնիտորինգը սկսել 2006թ. նոյեմբերի 22-ից:

2006թ-ի նոյեմբերի 22-23-ը տեղի ունեցավ Արաքս գետի նմուշառման փորձագիտական չորրորդ հանդիպումը, որի ընթացքում հայ և իրանցի փորձագետները նմուշառում կատարեցին սահմանի հայկական և իրանական հատվածներում: Իրանական կողմի առաջարկով պայմանավորվածություն է ձեռք բերվել /տարեկան 1անգամ/ օգոստոս ամսին կատարել Արաքս գետի նստվածքների նմուշառում և վերլուծություն, իսկ ջրի որակի մոնիտորինգով զբաղվող մասնագետների միաժամանակյա հետազոտման արդյունքները քննարկել 2007թ. հունիսին Նորդուզում կայանալիք համատեղ նիստի ժամանակ :

Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև ՀՀ և ԻԻՀ ներկայացուցիչների միջև Արաքս սահմանային գետի հինգերորդ նիստն անցկացնել Թավրիզում 2007թ. օգոստոսին:

ՀՀ առողջապահության նախարարություն

Հայ-իրանական կապերի կոորդինացման միջկառավարական հանձնաժողովի 6-րդ համատեղ նիստի ընթացքում «Փոխըմբռնման հուշագրի» ստորագրումից հետո բավականին ակտիվացել են կապերը Հայաստանում և Իրանում անցկացվող գիտական և բժշկական միջոցառումների մասին տեղեկությունների փոխանակման տեսանկյունից: Պարբերաբար տեղեկություններ են փոխանակվում կողմերի հիգիենիկ-հակահամաճարակային ծառայությունների միջև: Հայաստանը ներկայումս հետաքրքրված է Իրանից բուժման նպատակով հիվանդների ընդունման, ինչպես նաև մեր բուժաշխատողներին ԻԻՀ աշխատանքային գործուղումների կազմակերպման հարցերում:

ՀՀ և ԻԻՀ միջև առողջապահության բնագավառում համագործակցության շրջանակներում 2006թ. հուլիսի 10-13-ը կայացել է ԻԻՀ առողջապահության, բուժծառայության և բժշկագիտության նախարարության պատվիրակության այցը Հայաստան՝ նախարար Քամրան Բաղերի Լանքարանիի գլխավորությամբ:

Հանդիպման ժամանակ նախատեսված էր քննարկել համագործակցության նոր ուղիների զարգացման հնարավորությունների հետևյալ առաջարկությունները՝

առողջապահության կազմակերպման և կառավարման ոլորտում համագործակցության զարգացման հեռանկարը,

առաջնային բուժօգնության բնագավառի զարգացման ուղիները, ընտանեկան բժշկության ինստիտուտի կայացումը, ինչպես նաև այդ ոլորտում փորձի փոխանակումը,

համագործակցությունն առաջատար հանդիսացող սրտային վիրաբուժության կենտրոնների, Կարմիր Խաչի միջազգային վերականգնողական կենտրոնի, օրգանների կամ հյուսվածքների փոխպատվաստում, լազերաբուժություն իրականացնող բժշկական հաստատությունների հետ,

հեռուստաբժշկության և հեռուստախորհրդատվության զարգացման գաղափարը,

մասնագետների փոխադարձ փորձի փոխանակման և վերապատրաստման հնարավորությունը,

պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պատրաստակամության համաձայն համձայնագրերում ընդգրկված խնդիրների և ծրագրերի մշակման ու իրականացման մասնակցությունը,

առողջապահության ֆինանսավորման բնագավառում համագործակցության ծավալման խնդիրները:

<u>Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն</u>

«ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և ԻԻՀ մշակույթի և իսլամական կողմնորոշման նախարարության միջև 2004-2007թթ. մշակույթի բնագավառում համագործակցության մասին» ծրագրի շրջանակներում 2006թ. ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

ԻԻՀ հեղափոխության տարելիցին նվիրված իրանական արվեստի ցուցահանդես Երևանի ժողարվեստի թանգարանում:

«Իմամ Խոմեյնին և Աստծո մարգարեների մեծարումը»խորագրով գիտաժողով ՀՀ ԳԱԱ-ում

ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ կազմակերպվել է «Հայաստանի և Իրանի մանուկների բարեկամության շաբաթ» Երևանում:

ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի՝ ս/թ հուլիսի 5-6-ը Իրան կատարելիք այցի ընթացքում նախատեսվում էր ստորագրել ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և ԻԻՀ իրանական մշակութային ժառանգության և զբոսաշրջության կազմակերպության միջև 2006-2009թթ. համագործակցության ծրագիրը/ ստորագրված է/:

Բանակցություններ են տարվում Իրանում գտնվող Սբ. Ստեփանոս եկեղեցու վերականգնողական աշխատանքներին հայ մասնագետների մասնակցության ուղղությամբ:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության կրթության և դաստիարակության նախարարության միջև կրթական համագործակցության մասին 2005-2008 թվականների համար» Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրանական կողմին է ներկայացվել ՀՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի ցանկը:

Նույն փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ս.թ. փետրվարի 20-ից 27-ը Երևանում անց է կացվել «Հայաստանի և Իրանի մանուկների բարեկամության շաբաթ»: Համանուն շաբաթ իրականացնելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նախապատրաստական աշխատանքներ է կատարում ընթացիկ տարվա հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Իրանում «Հայաստանցի մանուկների ստեղծագործական շաբաթ» իրականացնելու համար:

Իրանի «Կրթության պարագաների արտադրություն» կազմակերպության հետ համագործակցելու և լաբորատոր սարքավորումներին ծանոթանալու և ուսումնական պարագաների արտադրության ոլորտում օժանդակություն ստանալու նպատակով, ս.թ. դեկտեմբերի 11-14-ը Թեհրան մեկնեց ՀՀ կրթության և գիտության նախարարության փորձագետների պատվիրակությունը:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պատրաստակամություն է հայտնել համագործակցելու ԻԻՀ հետ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության բնագավառում: Այդ նպատակով իրանական կողմին է ներկայացվել ՀՀ արհեստագործական ուսումնարանների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ակնկալելով նմանատիպ տեղեկություններ իրանական կողմից:

Իրանական կողմին է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ հանրակրթության, հատուկ կրթության և Իրանի դասագրքերում և ուսումնական աղբյուրներում հրապարակելու համար նյութեր և թեմատիկ ծրագրեր՝ ակնկալելով նմանատիպ տեղեկություններ իրանական կողմից:

Ս.թ. հուլիս ամսին Թեհրանում կազմակերպված մաթեմատիկայի 11-րդ միջազգային օլիմպիադային մասնակցելու նպատակով ԻԻՀ է մեկնել հայաստանյան թիմը /2 ղեկավար և 5 ուսանող/:

ԻԻՀ կրթության և դաստիարակության նախարարության նախաձեռնությամբ ս/թ. օգոստոսի 17-26-ը /դպրոցական ճամբար/ ԻԻՀ մեկնեց ՀՀ աշակերտներից և ուսուցիչներից / թվով 40 հոգի/ բաղկացած խումբը:

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության Կառավարության միջև գիտության և տեխնոլոգիաների բնագավառում 2006-2009թթ. համար համագործակցության մասին» գործնական ծրագիրը վերջնական քննարկելու և ստորագրելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից պաշտոնական այցի հրավեր է ուղարկվել ԻԻՀ գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարար Մոհամմադ Մեհդի Զահեդին: Հրավերի առնչությամբ իրանական կողմից դեռևս պատասխան չի ստացվել:

<u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u>

Բավականին ակտիվացել է այս ոլորտում հայ- իրանական համագործակցությունը, որի հիմքը դրվել է դեռևս 2005թ. հունվար ամսին՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակության Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ժամանակ: Ներկա փուլում այս շրջանակներում աշխատանքներ են տարվում «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառում համագործակցության մասին» փաստաթղթի ստորագրման նախապատրաստման, ԻԻՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ապահովության նախարար պարոն Մոհհամադ Զահրոմիի ՀՀ պատասխան այցի կազմակերպման, ինչպես նաև 2005թ. հունվարի 25-ին Թեհրանում ստորագրված «Փոխըմբռնման հուշագրի » դրույթների կատարման ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոնշյալ բնագավառում համագործակցության ակտիվացման միտումները նախարարությունն առաջարկել է Հայ- իրանական կապերի կոորդինացման միջկառավարական հանձնաժողովի կազմում ներգրավել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցչին:

ՀՀ արդարադատության նախարարություն

2006թ. հունիսի վերջերին Թեհրանում փոխհամաձայնեցվել են « Քաղաքացիական և քրեական գործերով իրավական համագործակցության մասին» և « Հանձնման մասին» միջպետական համաձայնագրերի տեքստերը, որոնք ստորագրվել են ՀՀ Նախագահի՝ 2006թ. հուլիսի 5-6-ը ԻԻՀ կատարած այցելության ընթացքում:

Ներկայումս համաձայնագրերը գտնվում են ՀՀ սահմանադրական դատարանի քննության ներքո, որից հետո սահմանված կարգով կներկայացվեն ՀՀ ԱԺ-ի վավերացմանը:

Միջմարզային Համագործակցություն

Սունիքի Մարզ

ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգ համապատասխան այց կազմակերպելու նպատակով մարզպետարանի կողմից կազմվել և ՀՀ ԱԳՆ է ներկայացվել ՀՀ Սյունիքի մարզի պատվիրակության անդամների կազմը:

Սյունիքի մարզպետի 10.04.2006թ. N 04-671 գրությամբ ՀՀ-ում ԻԻՀ դեսպանի միջոցով ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նորանշանակ նահանգապետ Մոհամմադ Մարզաղեին է փոխանցվել ՀՀ Սյունիքի մարզ այցելելու հրավերը:

2005թ. հունիսի 29-ին Կապան քաղաքում կայացած սահմանային համատեղ հանձնաժողովի հաջորդ՝ 2-րդ նիստը նախատեսվում է անցկացնել ընթացիկ տարվա երրորդ եռամսյակում:

Մարզպետարանի կողմից ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն առաջարկություններ էին ներկայացվել սահմանամերձ առևտրի շուկայի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Մասնավորապես, առաջարկվել էր վերանայել սահմանամերձ շուկայի հայկական կողմի մասնակիցների կողմից ներմուծվող ապրանքների ծավալի և գնի գործող չափաքանակները, որոնց համար նախատեսված է արտոնություն: Սակայն մինչև օրս նշված չափաքանակները չեն փոխվել:

Ըստ նախնական պայմանավորվածությունների՝ համապատասխան համաձայնագրերը կկնքվեն առաջիկա հանդիպման ժամանակ:

Արարատի Մարզ

2006թ. դեկտեմբերին իրանական կողմը `ԻԻՀ Հորմոզգանի նահանգապետի հրավերով, մտադիր էր կազմակերպել ՀՀ Արարարտի մարզպետ Ա. Սարգսյանի պատասխան այցն ԻԻՀ /հայկական կողմի առաջարկով այցի ժամկետը փոխվե է. նախնտրելի է մարզպետի այցն իրականացնել 2007թ. հունվարի վերջին/ :

Առևտրաարդյունաբերական պալատ

2006թ. փետրվարի 23-ից մարտի 2-ը ՀՀ ժամանեց ԻԻՀ Մազանդարանի նահանգի առևտրարդյունաբերական և հանքերի պալատի նախագահի առաջին տեղակալ Ահմադ Ասղարիի գլխավորած պատվիրակությունը: Ստորագրվել է ՀՀ առևտրարդյունաբերական պալատի և ԻԻՀ Մազանդարանի նահանգի առևտրաարդյունաբերական և հանքերի պալատի համագործակցության Փոխըմբռնման հուշագիրը:

2006թ. մարտի 9-ին ԻԻՀ Մազանդարանի նահանգ մեկնեց ՀՀ առևտրարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն Սամվել Հովակիմյանի գլխավորած պատվիրակությունը՝ ԻԻՀ Մազանդարանի նահանգում ՀՀ ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման նպատակով:

2006թ. մայիսի 11-ից 15-ը ԻԻՀ Մազանդարանի Սարի քաղաքում կայացավ հայկական ապրանքների ցուցահանդեսը և հայ-իրանական գործարար համաժողովը: Հայաստանից ԻԻՀ Մազանդարանի նահանգ մեկնեց 54 անդամից կազմված պատվիրակությունը:

2006թ. նոյեմբերի 3-10-ը Իրան-Հայաստան առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Լ. Ահարոնյանի հովանավորությամբ Երևանում անցկացվել է Իրան-Հայաստան առևտրաարդյունաբերական պալատի մասնավոր սեկտորի բնակարանաշինարարության մասնագիտացված երկրորդ ցուցահանդեսը:

Դեկտեմբերին նախատեսվում էր Իրանի արդյունաբերական և հանքերի պալատի նախագահ Ա. Խամուշիի այցը ՀՀ, որին զուգահեռ երկու երկրների գործարարների մասնակցությամբ պետք է կազմակերպվեր «Գործարարների երկրորդ համաժողովը», սակայն այցը հետաձգվել է: Նախատեսվում է այն իրականացնել 2007թ. առաջին եռամսյակում:

ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե

Արդեն վավերացվել է 2004թ. սեպտեմբերի 8-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության միջև մաքսային գործերում փոխադարձ վարչական օգնության վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիրը, որն ուժի մեջ է մտել :

Ներկայումս լուծում պահանջող մաքսային համագործակցության հիմնահարցերն են.

- Մաքսային ոլորտում ՀՀ և ԻԻՀ միջև ստորագրված միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերի իրագործում
- Երկու պետությունների տարածքներով անցնող բեռների /հիմնականում տարանցիկ/ և ուղևորների փոխադրումների նկատմամբ առավել բարենպաստ պայմանների ստեղվում
- Մեղրիի անցումային մաքսային կետում համապատասխան ծրագրերի մշակում և դրանց իրագործում:

Վերջին ժամանակներս Մեղրիի մաքսային կետում ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ զգալի աշխատանքներ են իրականացվել, ուղևորների և բեռնափոխադրումների համար ստեղծվել են առավել բարենպաստ պայմաններ, պարզեցվել է մաքսային ձևակերպումների ընթացակարգը:

ՀՀ Կենտրոնական բանկ

2006թ. հունվարի 31-ից փետրվարի 2-ը Թեհրանում գումարված ՀՀ և ԻԻՀ միջկառավարարական հանձնաժողովների վեցերորդ նիստին ՀՀ կենտրոնական բանկն իր մասնակցությունն է ունեցել և հանդես է եկել երկու երկրների կենտրոնական բանկերի միջև բանկային վերահսկողության ոլորտում նոր համաձայնագիր ստորագրելու առաջարկությամբ:

Նիստի ընթացքում իրանական կողմը համաձայնել է քննարկել համաձայնագրի ստորագրման հնարավորությունը մոտ ապագայում:

Նախատեսվում էր վերոնշյալ փաստաթուղթը ստորագրել ՀՀ Նախագահ պրն. Ռ. Քոչարյանի ԻԻՀ կատարելիք աշխատանքային այցի շրջանակներում: Աշխատանքային

խմբում ընդգրկված ՀՀ Կենտրոնական բանկի աշխատակիցը քննարկումների և փաստաթուղթը վերջնական տեսքի բերելու նպատակով Թեհրանում իրանցի գործընկերների հետ բանակցել և քննարկել է բանկային վերահսկողության ոլորտում հնարավոր համագործակցության ձևերը, սակայն իրանական կողմը նշել էր, որ նման համաձայնագիր կնքելու անհրաժեշտություն իրենք չունեն՝ մի շարք պատճառներով: Նշվել էր նաև, որ Իրանի կենտրոնական բանկը ոչ մի երկրի հետ վերահսկողության ոլորտում համագործակցության նման պայմանագիր չունի, իսկ եթե ինչ- որ պատճառով կարիք է առաջանում տեղեկատվության ստացման կամ տրամադրման, ապա դա ընդունված է իրականացնել առանց համաձայնագրի:

Դրանից հետո իրանական կողմից հայկական կողմին է ներկայացվել ՀՀ և ԻԻՀ կենտրոնական բանկերի միջև համագործակցության վերաբերյալ համաձայնագրի նոր նախագիծ, որն առայժմ ուսումնասիրվում է հայ մասնագետների կողմից:

ՁԼՄ քնագավառ

6-րդ նիստի արդյունքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և Իրանի Իսլամական Հանրապետության ռադիոհեռուստատեսության կազմակերպության միջև» Փոխըմբռնման հուշագրի դրույթների իրագործման և հետագա համագործակցության մանրամասները քննարկելու նպատակով ՀՀ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ պրն. Ա. Հարությունյանի անունից ԻԻՀ ռադիոհեռուստատեսության կազմակերպության նախագահ Է.Զարղամիին ուղարկվել է ՀՀ այցելության պաշտոնական հրավեր /նշյալ այցը նախատեսվում էր իրականացնել 2006թ. սեպտեմբերի սկզբին, սակայն իրանական կողմից առայժմ չի ստացվել պատասխանը/:

- **Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջկառավարական հանձնաժողով**

Հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքների համար որպես ուղեցույց են հանդիսացել Հայ-եգիպտական տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 4-րդ համատեղ նիստի արձանագրության դրույթները:

Կատարվել են հետևալ աշխատանքները ըստ ոլորտների.

Առևտրաարդյունաբերական ոլորտ. մշակման փուլում է գտնվում «ՀՀ և ԵԱՀ կառավարությունների միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի» նախագիծը:

Հայ-եգիպտական տնտեսական համագործակցության շրջանակներում քննարկվում են երկու պալատների միջև համագործակցության հնարավոր ոլորտները, ինչպես նաև աշխատանք է տարվում հայ-եգիպտական առևտրաարդյունաբերական պալատ ստեղծելու ուղղությամբ:

2005թ. դեկտեմբերին ՀՀ վարչապետի Եգիպտոս կատարած այցի ընթացքում եգիպտական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, 2006թ. սեպտեմբերի 19-22-ը Եգիպտոսում ՀՀ դեսպանության նախաձեռնությամբ կազմակերպվեց Եգիպտոսի տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի պատվիրակության առաջին այցը Հայաստան, որը գլխավորում էր Եգիպտոսի ՏՏ և հեռահաղորդակցության ձեռնարկությունների պալատի նախագահը: Այցի ընթացքում կայացավ հայ-եգիպտական տեղեկատվական տեխնոլոգիաների համատեղ ֆորում, որին եգիպտական կողմից մասնակցեցին շուրջ 10 խոշոր ձեռնարկությունների ղեկավարներ: Ստորագրվեց համապատասխան պայմանագիր «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի և Եգիպտոսի ՏՏ ձեռնարկությունների պալատի միջև:

Աշխատանքներ են տարվել նաև 2008թ. Egypt Air ավիաընկերության կողմից Կահիրե-Երևան-Կահիրե օդային ուղիղ կամ տարանցիկ կանոնավոր չվերթ իրականացնելու ուղղությամբ:

2006թ. հուլիսի 25-30-ը կայացել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ս. Գալստյանի գլխավորած պատվիրակության աշխատանքային այցը Եգիպտոս: Այցի ընթացքում նախարարի տեղակալը հանդիպել է Եգիպտոսի գյուղնախարարի, գյուղատնտեսական մասնագիտացված կենտրոնների ղեկավարների հետ: Այցի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն, մասնավորապես գյուղատնտեսական պատվաստուկների բնագավառում եգիպտական փորձի փոխանակման, այգիների վերամշակման, սերմերի, բուսական և կենդանական պատվաստուկների արտահանման և ներմուծման, Կահիրեի գյուղատնտեսական ուսումնասիրությունների կենտրոնում հայ մասնագետների վերապատրաստման դասընթացները կազմակերպելու և փորձի փոխանակման վերաբերյալ:

Երկկողմ պայմանավորվածություն է ձեռք բերվել ս/թ. նոյեմբերին Եգիպտոսի գյուղատնտեսության նախարարության պատվիրակության Հայաստան այցը իրականացնելու վերաբերյալ:

Աշխատանքներ են իրականացվել ՀՀ-ում սերմնաբուծության զարգացմանը նպաստելու նպատակով Հայաստան – FAO - Եգիպտոս համագործակցություն ծավալելու ուղղությամբ:

Աշխատանքներն իրականացվել են "2006-2009թթ. Կրթության բնագավառում համագործակցության մասին գործնական ծրագրի" շրջանակներում:

ԵԱՀ բարձրագույն կրթության նախարարության հետ ճշտվել են ՀՀ քաղաքացիներին կրթաթոշակների տրամադրման հետ կապված հարցերը: Եգիպտական կողմը տրամադրել է բարձրագույն կրթություն ստանալու 2 և արաբերեն լեզվի վերապատրաստման 5 կրթաթոշակներ: Միևնույն ժամանակ հայկական կողմը եգիպտականին տրամադրել է 3 բարձրագույն և 2 հետդիպլոմային ուսուցման կրթաթոշակ:

Գործնական կապեր են հաստատվել եգիպտական Այն Շամս համալսարանի հետ: Ուսումնասիրվում են վերջինիս հետ ՀՀ բուհերի համագործակցության կոնկրետ ծրագրերը:

"ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և և ԵԱՀ մշակույթի նախարարության միջև 2006-2008թթ. Մշակութային համագործակցության մասին" գործնական ծրագրի շրջանակներում իրականավցել կամ նախապատրաստական փուլում են հետևյալ միջոցառումները.

Դեկտեմբերի 2-8-ը ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ.Մարտիրոսյանը այցելեց Եգիպտոս, ուր մասնակցեց Ալեքսանդրիայում կայացած միջակադեմիական միջազգային խորհրդաժողովին, ինչպես նաև հանդիպում ունեցավ Կահիրեի համալսարանի ղեկավարության հետ և քննարկեց 2007թ. սեպտեմբերին համալսարանում հայագիտության բաժնի բացմանն ու համագործակցության հետագա խորացմանը վերաբերող հարցեր:

ԵԱՀ մշակույթի նախարարության հրավերով Գ. Սունդուկյանի անվան Ազգային Ակադեմիական թատրոնի թատերախումբը մասնակցեց Կահիրեում կայացած Փորձարարական թատրոնների միջազգային փառատոնին և շահեց մրցանակ: Կահիրեի միջազգային Բիենալեին ներկայացվեցին հայ նկարիչ Թենի Վարդանյանի աշխատանքները, որոնք արժանացան ցուցահանդեսի ամենաբարձր պարգևին՝ ոսկե մեդալին: Եգիպտոսի մշակույթի նախարարության հրավերով Գ.Սունդուկյանի անվան

Ազգային Ակադեմիական թատրոնը 2006թ. սեպտեմբերի 10-20-ը մասնակցեց Կահիրեում կայացած Փորձարարական թատրոնի միջազգային փառատոնին: Հայաստանից ժամանած դերասանների խումբը /9 հոգի/, որը գլխավորում էր բենադրիչ-ռեժիսոր Սուրեն Շահվերդյանը, փառատոնի ընթացքում հանդես եկավ «Փսիխոզ 4.48» ներկայացմամբ և արժանացավ «Լավագույն ռեժիսոր» մրցանակին:

Կահիրեի օպերայի հրավերով 2007թ. փետրվարին Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը հյուրախաղերով հանդես կգա Եգիպտոսում:

Եգիպտոսի էներգետիկայի նախարարությունը երկկողմ համագործակցությունը խթանելու նպատակով, առաջարկել է իրականացնել այդ բնագավառի մասնագետների փոխայցելություններ և փորձի փոխանակում, խրախուսել երկու երկրներում էներգետիկ ապրանքներ արտադրող ընկերությունների մասնակցությունը արտադրական ցուցահանդեսներին:

Ֆինանսական և բանկային հարցերի վերաբերյալ մշտապես տեղեկատվություն է փոխանակվել ՀՀ կենտրոնական բանկի և եգիպտական կողմի հետ:

V <u>Հայ-սիրիական</u> միջկառավարական հանձնաժողով

Շարունակվել են աշխատանքները հանձնաժողովի երկրորդ նիստի արձանագրության հանձնարարականների կատարման ուղղությամբ, ակտիվ համագործակցություն է ծավալվել գյուղատնտեսության բնագավառում: Ներկայումս, երկու երկրների իրավասու գերատեսչությունների միջև համագործակցություն է ծավալվել բնապահպանության, սեյսմոլոգիայի, էներգետիկայի, ոռոգման համակարգերի բնագավառներում: Վերանայվել և առաջարկներ է ներկայացվել երկու երկրների կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի գործնական ծրագիրը երկարացնելու մինչև 2010թ: Սիրիական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողովի IV նիստը Դամասկոսում 2007թ. մարտի վերջին անցկացնելու մասին: Համապատասխան աշխատանքներ են տարվում գումարվելիք նիստին պատշաճ մակարդակով ներկայանալու համար:

- **<u>Հայ- լիբանանյան</u> միջկառավարական հանձնաժողով**

Լիբանանում տիրող ներքին, ինչպես նաև տարածաշրջանում ծավալված քաղաքական բարդ իրադրության պատճառով տեղաշարժ չի արձանագրվել հայ-լիբանանյան միջկառավարական հանձնաժողովի աշխատանքներում:

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **<u>Հայ-կատարական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **Առևտրատնտեսական հարցերով <u>հայ-ղազախական</u> միջկառավարական հանձնաժողով**

Ս.թ նոյեմբերի 5-ին. ք. Աստանայում տեղի ունեցավ հայ-ղազախական միջկառավարական տնտեսական հանձնաժողովի երկրորդ նիստը: Նիստի օրակարգում մասնավորապես ընդգրկվել էին առևտրային, ինովացիոն, գյուղատնտեսության, կրթության, մշակույթի, տրանսպորտի և այլ բնագավառներում համագործակցության հարցերը:

Հանձնաժողովի նիստի աշխատանքների արդյունքում ստորագրվեց Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի երկրորդ նիստի արձանագրությունը:

Նիստի ընթացքում քննարկվեցին նաև երկու երկրների միջև իրավապայմանագրային դաշտի հետագա զարգացման հարցեր, մասնավորապես կողմերը պատրաստակամություն հայտնեցին նոյեմբերի 6-7-ը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի Աստանա կատարելիք այցի ընթացքում ստորագրել

«ՀՀ կառավարության և ՂՀ կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին»,

«ՀՀ կառավարության և ՂՀ կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ»,

«ՀՀ կառավարության և ՂՀ կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին»,

«ՀՀ Կառավարության և ՂՀ Կառավարության միջև մշակույթի բնագավառում համագործակցության մասին»,

«ՀՀ կառավարության և ՂՀ կառավարության միջև քաղաքացիների փոխադարձ այցելությունների մասին» համաձայնագրերը և

«Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջև իրավական օգնության և համագործակցության մասին» միջգերատեսչական համաձայնագիրը:

Մյուս փաստաթղթերի կապակցությամբ հանձնարարականներ տրվեցին համապատասխան նախարարություններին ու գերատեսչություններին շարունակելու աշխատանքը նշված համաձայնագրերը համաձայնեցնելու ուղղությամբ:

Քննարկվեց նաև ՀՀ և ՂՀ միջև առևտրատնտեսական համագործակցության իրավիճակը: Կողմերը նշեցին, որ երկկողմանի հարաբերությունների մակարդակը առևտրային բնագավառում չի համապատասխանում երկու երկրներում առկա ներուժին և համաձայնվեցին գործնական աջակցություն ցուցաբերել երկկողմանի առևտրատնտեսական կապերի ամրապնդմանն ուղղված միջոցառումներին, մասնավորապես ճանաչողական առաքելություններին, համատեղ տոնավաճառների ու ցուցահանդեսների անցկացմանը, տեղեկատվության փոխանակման սեմինարների կազմակերպմանը, երկու երկրների գործարարների միջև ուղղակի կապերի հաստատմանը, ինչպես նաև ձեռնարկատիրության զարգացման ոլորտում կադրերի պատրաստման և փորձի փոխանակման հարցերում: Կողմերը ընդգծեցին նաև ներդրումների ընդհանուր ծավալի ավելացմանն ուղղված համապատասխան միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությունը, մասնավորապես հանձնաժողովը հանձնարարեց ՂՀ և ՀՀ համապատասխան մարմիններին իրականացնել անընդհատ հիմունքներով տեղեկատվության փոխանակում առավել հեռանկարային ներդրումային ծրագրերի վերաբերյալ:

Ինովացիոն բնագավառում համագործակցությունն ակտիվացնելու համար ղազախական կողմը առաջարկեց քննարկել տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում համատեղ ձեռնարկությունների ստեղծման հնարավորությունը՝ Ալմաթիի Մեդեուի շրջանի, Ալաթաուի ավանում գտնվող «Տեղեկատավական տեխնոլոգիաների պարկ» հատուկ տնտեսական գոտում: Իր հերթին, հայկական կողմը առաջարկեց

քննարկել նաև Երևանի Ա. Ալիխանյանի անվան ֆիզիկայի ինստիտուտի առաջավոր տեխնոլոգիաների կենտրոնի մասնակցությունը ինովացիոն բնագավառում պետծառայողների վերապատրաստման ծրագրերի համատեղ մշակման գործընթացներում, ինչը ուղղված կլինի գիտանորարարական կառույցների զարգացմանը, փորձի փոխանակմանը, նշյալ ճյուղի օրենսդրական բնագավառի ուսումնասիրմանն ու վերլուծմանը:

Կողմերը նշեցին, որ առկա է մեծ ներուժ գյուղատնտեսության բնագավառում համագործակցության ակտիվացման և զարգացման համար: Ելնելով այն հանգամանքից, որ մթերային հացահատիկի հիմնական ծավալը ՀՀ ներկրվում է այլ երկրներից և Ղազախստանից նման առաքումներ Հայաստան չեն իրականացվում, հանձնարարվեց երկու երկրների շահագրգիռ պետական մարմիններին՝ ուսումնասիրել և առաջարկություններ ներկայացնել հացահատիկի և դրա վերամշակման արտադրանքի առևտրի բնագավառում փոխշահավետ համագործակցության հնարավորությունների մասին:

Գյուղատնտեսության բնագավառում համագործակցությունը զարգացնելու նպատակով որոշվեց նաև համատեղ միջոցառումներ կազմակերպել՝ հացազգի, պտղա-հատապտղային և բոստանային կուլտուրաների ընտրության և սերմափորձության բնագավառում:

Տրանսպորտային համագործակցության բնագավառում կողմերը ընդգծեցին գոյություն ունեցող միջազգային տրանսպորտային միջանցքների զարգացման գործում համագործակցության կարևորությունը:

Զբոսաշրջության բնագավառում համագործակցությունը մեծապես նպաստում է բարեկամական կապերի ընդլայնմանը, երկու պետությունների միջև փոխհասկացողության խորացմանը, միմյանց պատմության և մշակութային ժառանգությունների հետ ծանոթանալուն: Այս նպատակով որոշվեց աշխուժացնել համագործակցությունը կողմերի համապատասխան նախարարությունների ու գերատեսչությունների միջև: Կողմերը, հաշվի առնելով, որ Հայաստանն ու Ղազախստանը ընդգրկված են «Մեծ Մետաքսե ճանապարհ» զբոսաշրջային ծրագրում, պայմանավորվեցին նաև այդ ծրագրի շրջանակներում մասնագիտական լրագրողների և զբոսաշրջային օպերատորների երկկողմանի ճանաչողական այցերի կազմակերպման հարցի շուրջ:

Հանձնաժողովը գտավ, որ պետք է ամրապնդել համագործակցությունը ՂՀ և ՀՀ-ի միջև՝ կրթագիտական, մշակույթի, տեղեկատվության, արխիվային գործի, սեյսմիկ պաշտպանության և այլ բնագավառներում:

Կողմերը արձանագրեցին, որ Մատենադարանի ֆոնդերում պահվող Ղազախստանի մշակույթի, պատմության և լեզվի մասին տեղեկատվությունների, ինչպես նաև հին ձեռագրեի ուսումնասիրման նպատակով 2005թ-ի նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 8-ը Երևանում էր գտնվում ղազախ փորձագետների պատվիրակությունը: Այցի արդյունքում որոշվեցին Ղազախստանի վերաբերյալ նյութերի ցանկը և վերջիներս ձեռք բերեցին արաբական և պարսկական լեզուներով ձեռագրերի քսերոպատճենները:

Կողմերը արձանագրեցին նաև «Կենտրոնական Ասիայի և Կովկասի երկրների միջտարածաշրջանային համագործակցության» ծրագրերի շրջանակներում հայ և ղազախ մասնագետների փոխադարձ շփումների հաջողությունները: Այս ծրագրի նպատակն է տարական մասնագիտական կրթության համակարգի աշխատակիցների որակավորման բարձրացման հարցերի վերաբերյալ գիտամեթոդական տեղեկատվության և փորձի փոխանակումը: «Լեզուների մասին և «Կրթության մասին» ՂՀ օրենքներին համապատասխան Ղազախստանում ստեղծված են անհրաժեշտ պայմաններ տարբեր ազգությունների համար իրենց բնակության վայրերում ուսումնասիրելու մայրենի լեզուն: Այս կապակցությամբ հայկական կողմը պատրաստակամություն է հայտնել ապահովել հայկական դպրոցներին անհրաժեշտ գիտամեթոդական գրականությամբ և դասագրքերով:

Կողմերը հաստատեցին իրենց պատրաստակամությունը բարձրագույն կրթության դիպլոմների փոխադարձ ճանաչման հարցը ուսումնասիրելու համար: ՀՀ և ՂՀ կառավարությունների միջև մշակույթի բնագավառում համաձայանագրի ուժի մեջ մտնելուց հետո, որոշվեց քննության առնել երկարաժամկետ (2-3 տարով) մշակութային համագործակցության ծրագրի նախապատրաստման հնարավորության հարցը:

Քննարկվեցին նաև երկրաշարժերի ուսումնասիրման, սեյսմիկ ռիսկերի կանխարգելման բնագավառում համագործակցության հնարավորությունները, այդ թվում հանձնարարվեց ձեռնարկել անհրաժեշտ քայլեր սեյսմիկ պաշտպանության ոլորտում երկկողմանի համաձայնագիր կնքելու ուղղությամբ:

Հանձնաժողովի հաջորդ երրորդ նիստը կկայանա 2007թ-ին, ք. Երևանում:

- **Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև տնտեսական և գիտատեխնիկական հարցերով միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել 2004 թ. հոկտեմբերի 21-23-ը Մինսկում կայացած տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի վեցերորդ համատեղ նիստի արդյունքում ստորագրված եզրափակիչ Արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների և ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովի հայկական մասի անհատական նոր կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 30.11.2005 թ. N 944-Ա որոշմամբ:

2006 թ. հոկտեմբերին 24-ին Երեւանում նախատեսվում էր հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ յոթերորդ համատեղ նիստի անցկացումը, որը, սակայն, տեխնիկական պատճառով չի կայացել: Այն նախատեսվում է անցկացնել 2007թ. մարտին Մինսկում:

- **Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել 2004 թ. մայիսի 11-ին ՀՀ նարչապետ Ա. Մարգարյանի ք. Կիև կատարելիք պաշտոնական այցի շրջանակներում կայացած տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի երրորդ համատեղ նիստի արդյունքում ստորագրված արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների և տնտեսական համագործակցության վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:

Երևանում կայանալիք չորրորդ համատեղ նիստը նախատեսվում էր անցկացնել ս.թ. 2006թ. հունիսին: Հանձնաժողովի հերթական չորրորդ նիստը, չնայած հայկական կողմի համապատասխան առաջարկին, չկայացավ՝ Ուկրաինայի բուռն ներքաղաքական իրադարձությունների, մասնավորապես, վարչապետի և կառավարության կազմի փոփոխության պատճառով, ուստի անորոշ ժամանակով նիստը հետաձգվել է:

✓ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Հանձնաժողովի հերթական հինգերորդ նիստը տեղի է ունեցել 2006թ. հուլիսի 7-8-ը ք.Բաթումիում:

Քննարկվել են հայ-վրացական տնտեսական հարաբերություններին առնչվող բազմաբնույթ հարցեր՝ հիմնականում ողողված էներգետիկայի, տրանսպորտի, գյուղատնտեսության, արդյունաբերության, զբոսաշրջիկության, առողջապահության, ֆինանսների, մաքսային, կրթության, մշակութային, բնապահպանության ոլորտներում ստեղծվաց իրավիճակի բարելավմանը:

Հայաստանի և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության հիմնական ուղղուրթյուններն են էներգետիկան և տրանսպորտը: Էներգետիկայի ոլորտում շարունակվում են աշխատանքները նոր 400կվ հզորությամբ բարձրավոլտ հաղորդակցման գծի կառուցման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա Հայաստանի և Վրաստանի էլեկտրահամակարգերին հետագայում անցնել զուգահեռ աշխատանքի ռեժիմի:

Ինչ վերաբերում է տրանսպորտային համագործակցությանը, ապա, նկատի ունենալով, որ Հայաստանի բեռնափոխադրումների գերակշռող մասը իրականացվում է Վրաստանի տարածքով, կարևորում ենք հայաստանյան բեռնափոխադրումների համար նախկինում սահմանված զեղչերի պահպանումը նաև 2006թ. ընթացքում և ձեռք բերված պայմանավորվածությունները 2007 թվականի համար: Հարկ է նշել, որ 2006թ. ապրիլի 25-ին Թբիլիսիում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին» Համաձայնագիրը վավերացվել է ՀՀ ԱԺ կողմից ս.թ. հունիսի 13-ին և ուժի մեջ է մտել ս.թ. հուլիսի 6-ից: Համաձայնագրի կետերի համաձայն՝ ՀՀ և Վրաստանի քաղաքացիները Հայ-վրացական պետական սահմանը հատելիս, ազատվում են նախկինում ավտոմեքենաների համար սահմանված տուրքերի և հարկերի գանձումներից:

Ընթացիկ տարում նույնպես շարունակվել են Հայաստանի և Վրաստանի միջև պետական սահմանի սահմանագծման և սահմանազատման աշխատանքները: Իրականացվել են բանակցություններ հանձնաժողովների նախագահների և փորձագետների մակարդակով: Բանակցությունների արդյունքում համաձայնացվել է հայ-վրացական պետական սահմանի 110 կմ. հատվածները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հայ-վրացական պետական սահմանի սահմանագծման և սահմանազատման

բանակցություններում որպես հիմք ընդունել 1938թ. երկու Հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեների որոշումները:

- **<u>Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության</u> միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել: Համաձայն ՀՀ և Տաջիկստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 2-րդ նիստի արձանագրության 7-րդ կետի՝ հերթական 3-րդ նիստը նախատեսվում է անցկացնել Երևանում 2007թ.:

- **<u>Հայ-մոլդովական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել

- **<u>Հայ-թուրքմենական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **<u>Հայ-ղրղզական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

- **Առևտրի, տնտեսության, տեխնոլոգիայի, գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում համագործակցության <u>հայ-հնդկական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստ չի կայացել: Հանձնաժողովի հերթական նիստը կայանալու է 2006թ. հոկտեմբերին Երևանում: Կիսամյակի ընթացքում ձևավորվել է հանձնաժողովի առաջիկա նիստի օրակարգը: Մասնավորապես, կողմերի միջև փոխանակվել են համագործակցության ծրագրեր տեղեկատվական

տեխնոլոգիաների, գեղարվեստական ֆիլմերի նկարահանման, գիտա-տեխնիկական, օդային տրանսպորտի, առևտրի տարբեր բնագավառներում և այլ ոլորտներում: Աշխատանքներ են տարվել իրավապայմանագրային դաշտը լրացնելու ուղղությամբ: Այս աշխատանքների ընթացքում բացահայտվել են տարբեր ոլորտներում երկու երկրների համագործակցության խորացման նոր հեռանկարային ծրագրեր, որոնց իրագործման մեխանիզմները հնարավոր կլինի գտնել հանձնաժողովի առաջիկա նիստի շրջանակներում:

Նախապատրաստվել է հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի 4-րդ նիստը, որը կկայանա 2007թ. հունվարի 18-20-ին Նյու-Դելիում:

- **Առևտրի, արդյունաբերության, էներգետիկայի, գիտության, տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, կրթության և մշակույթի բնագավառներում <u>հայ-չինական</u> միջկառավարական հանձնաժողով**

2006թ.-ի առաջին կիսամյակում հանձնաժողովի նիստ չի կայացել: Ներկայումս պետք է նշանակվի հանձնաժողովի հայկական մասի համանախագահ, որից հետո կճշտվի հանձնաժողովի հերթական նիստի (2007թ.) օրակարգը:

Աշխատանքներ են տարվել հանձնաժողովի նախորդ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ուղղությամբ: Մասնավորապես, Պեկինում ՀՀ դեսպանության հետ համատեղ համակարգվել են Շանսի-Նաիրիտ հայ-չինական ՀՁ ստեղծման վերջնական փուլի աշխատանքները: Բանակցություններ են վարվել ՉԺՀ կառավարության կողմից 2005թ. Հայաստանին տրամադրված 15 մլն յուանի անհատույց օգնության շրջանակներում իրականացվելիք ծրագրերի ուղղությամբ, որոնց իրագործումը սպասվում է 2007թ. ընթացքում:

- **<u>Հայ- ճապոնական</u> տնտեսական համագործակցության կոմիտե**

2006թ.-ի առաջին կիսամյակում կոմիտեի նիստ չի կայացել: Հայ-ճապոնական տնտեսական միջոցառումների կամ հեռանկարային ծրագրերի քննարկումների կազմակերպումը պայմանավորված չէ տնտեսական համագործակցության կոմիտեի գործունեությամբ: Ներկա փուլում իրենց լիովին արդարացնում են երկկողմ համագործակցության առջև կագնող կոնկրետ խնդիրների վերաբերյալ առանց հստակ ժամանակացույցի անցկացվող, ֆորումները, քննարկումները և բանակցությունները:

v Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև առևտրատնտեսական ու գիտատեխնիկական միջկառավարական հանձնաժողով

Հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի հիմնական նպատակն է խորացնել տնտեսական համագործակցությունը երկու երկրների միջև, նպաստել միջպետական կապերի զարգացմանը և ընդլայնմանը, ինչպես նաև երկու երկրների միջև տնտեսական համագործակցության առաջնային խնդիրների կարգավորմանը, հստակեցնել երկու երկրների միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության զարգացմանը նպատակաուղղված եղանակները, գործնական լուծումներ առաջարկել տնտեսության տարբեր բնագավառներում առկա խնդիրների կարգավորման նպատակով:

2006թ. հունիսի 26-ից 28-ը Երևանում կայացավ Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև տնտեսական, արդյունաբերական, տեխնիկական և գիտական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի չորրորդ համատեղ նիստը: Հանձնաժողովի 3-րդ նիստը տեղի էր ունեցել 2004թ. փետրվարի 23-24-ը ք. Սոֆիայում:

Հանձնաժողովի հայկական մասի նախագահն էր ՀՀ տրանսպորտի և կապի նախարար պրն. Անդրանիկ Մանուկյանը: Հանձնաժողովի 4-րդ նիստին մասնակցող Բուլղարիայի պատվիրակությունը ղեկավարեց Բուլղարիայի Հանրապետության պետական կառավարման և վարչական բարեփոխումների նախարար, Հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ պրն. Նիկոլայ Վասիլևը:

Նիստի արդյունքում ստորագրվեց Արձանագրություն, որում ամրագրվեցին դրույթներ՝ երկու երկրների միջև համագործակցության հետագա զարգացում տրանսպորտի և հաղորդակցության, առևտրի և ներդրումների, շրջագայության, տեղեկատվական տեխնոլոգիաների, փոքր և միջին ձեռնարկատիրության, գյուղատնտեսության, սոցիալական ապահովության, սպորտի և երիտասարդության, «էլեկտրոնային կառավարման», էներգետիկայի, տարածքային զարգացման, քաղաքաշինության, շրջակա միջավայրի պահպանության և ֆինանսների բնագավառներում:

Հայ-բուլղարական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը նախատեսվում է անցկացնել 2007թ. քաղաք Սոֆիայում:

- **<u>Հայ-ռումինական</u> միջկառավարական հանձնաժողով**

2006թ. հունիսի 8-ին ՀՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում տեղի ունեցավ հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի նիստը: Նիստի ընթացքում քննարկվեցին երկկողմ հարաբերությունների զարգացմանն ուղղված ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների կողմից առաջացող հարցերը: Նիստի արդյունքում մշակվոց Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 2-րդ նիստի օրակարգի նախագիծը, որը ներկայացվեց ռումինական կողմի քննարկմանը:

2006թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում տեղի ունեցավ Հանձնաժողովի հայկական մասի հերթական նիստը, որի ընթացքում քննարկվել են ռումինական կողմի առաջարկություններով լրամշակված օրակարգի նախագիծը, ինչպեսնաև հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողովի երկրորդ նիստի կազմակերպչական հարցերը:

Ռումինիայի Նախագահ պրն. Տրայան Բասեսկուի Հայաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի շրջանակներում 2006թ. հոկտեմբերի 4-5-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի միջև համատեղ առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ երկրորդ նիստը, որի ընթացքում կողմերը քննարկեցին երկկողմ տնտեսական համագործակցության զարգացման հեռանկարները: Հանձնաժողովի հայկական մասի նախագահն էր ՀՀ տրանսպորտի և կապի նախարար պրն. Անդրանիկ Մանուկյանը, իսկ Ռումինիայի պատվիրակությունը ղեկավարեց Ռումինիայի կառավարության անդամ, առևտրի նախարար-դելեգատ /էկոնոմիկայի և առևտրի նախարարության համակարգում/ պարոն Իուլիու Վինկլերը:

Նիստի արդյունքում ստորագրվեց Արձանագրություն, որտեղ ամրագրվեցին տնտեսության տարբեր բնագավառներում քննարկված խնդիրներին վերաբերող դրույթները և կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունները, որոնք ուղղված են երկկողմ տնտեսական հարաբերությունների հետագա զարգացմանը:

Հայ-ռումինական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը նախատեսվում է անցկացնել 2007թ. քաղաք Բուխարեստում:

- **<u>Հայ-ավստրիական</u> միջկառավարական հանձնաժողով**

Հայ-ավստրիական միջկառավարական հանձնաժողովի երկրորդ նիստի ընթացքում ձեռքբերված պամանավորվածությունների շրջանակներում 2006թ. նոյեմբերի Հայաստան է այցելել ավստրիական գործարար առաքելությունը: Տեղի են ունեցել ավստրիական պատվիրակության և դեսպանատան առևտրական կցորդի հանդիպումները հանձնաժողովի հայկական մասի նախագահ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Տ.Դավթյանի և տնտեսության տարբեր ոլորտները ներկայացնող հայ գործարարների հետ: Հանձնաժողովի համանախագահների միջև քննարկումների արդյունքում նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել հայ-ավստրիական միջկառավարական հանձնաժողովի հերթական երրորդ նիստն անցկացնել 2007թ. մարտին՝ համատեղելով այն հայ-ավստրիական գործարար համաժողովի հետ:

- **<u>Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի հանրապետության</u> միջև համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Հանձնաժողովի ստեղծման օրվանից մինչ օրս չի կայացել համատեղ նիստ:

- **<u>Հայ-հունական</u> տնտեսական, արդյունաբերական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Հայ-հունական միջկառավարական հանձնաժողովի հիմնական նպատակն է խորացնել տնտեսական համագործակցությունը երկու երկրների միջև, նպաստել միջպետական կապերի զարգացմանը և ընդլայնմանը, ուրվագծել երկու երկրների միջև տնտեսական համագործակցության առաջնային խնդիրներն ու ուղղությունները, հստակեցնել երկու երկրների միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության զարգացմանը նպատակաուղղված եղանակները, գործնական լուծումներ առաջարկել տնտեսության տարբեր բնագավառներում առկա խնդիրների կարգավորման նպատակով:

2006թ. մարտի 29-30-ը Երևանում կայացավ Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության միջև տնտեսական, արդյունաբերական, տեխնիկական և գիտական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի չորրորդ

համատեղ նիստը: Հանձնաժողովի 3-րդ նիստը տեղի էր ունեցել 2002թ. նոյեմբերի 27-28-ը ք. Երևանում:

Հանձնաժողովի հայկական մասի նախագահն էր ՀՀ գյուղատնտեսության նախարար պրն. Դավիթ Լոքյանը: Հանձնաժողովի 4-րդ նիստին մասնակցող Հունաստանի պատվիրակությունը ղեկավարեց Հունաստանի ԱԳ նախարարի տեղակալ պրն. Էվրիպիդիս Ստիլիանիդիսը:

Հանձնաժողովի նիստի աշխատանքների շրջանակներում կայացան ՀՀ Նախագահ պրն. Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ վարչապետ պրն. Անդրանիկ Մարգարյանի, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար պրն. Կարեն Ճշմարիտյանի և ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ պրն. Արման Կիրակոսյանի հանդիպումները պրն. Ստիլիանիդիսի հետ:

Նիստի արդյունքում ստորագրվեց Արձանագրություն, որում ամրագրվեցին տնտեսության տարբեր բնագավառներում քննարկված խնդիրներին վերաբերող դրույթները և կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունները, որոնք ուղղված են երկկողմ տնտեսական հարաբերությունների հետագա զարգացմանը:

2006թ. դեկտեմբերի 6-9-ը ՀՀ գյուղատնտեսության նախարար, հայ-հունական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ պրն. Դավիթ Լոքյանը աշխատանքային այցով գտնվում էր Հունաստանում, որի ընթացքում հանդիպում է ունեցել Հունաստանի ԱԳ փոխնախարար, հայ-հունական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ պրն. Էվրիպիդիս Ստիլիանիդիսի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են հանձնաժողովի գործունեությանն առնչվող հարցեր: Հունական կողմը պատրաստակամություն է հայտնել Հայաստանում իրականացնելու ֆինանսական օժանդակության տարբեր ծրագրեր, այդ թվում նաև ՀՀ Լոռու մարզի Յաղդան և Մադան համայնքներում:

✓ <u>Հայաստան-Եվրամիություն</u> համագործակցության կոմիտե

2006թ. հոկտեմբերի 25-ին Բրյուսելում տեղի է ունեցել ԳՀՀ-ի շրջանակներում Հայաստան-Եվրամիություն Համագործակցության կոմիտեի 7-րդ նիստը:

Նիստի համանախագահներն էին.

Հայկական կողմից՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար Կ.Ճշմարիտյանը, իսկ եվրոպական կողմից՝ Եվրոպական Հանձնաժողովի արտաքին

հարաբերությունների գլխավոր վարչության Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի վարչության պետ Հ.Մինգարելին:

Նիստի ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, մասնավորապես՝ Եվրոպական հարևանության գործողությունների Ծրագրի ընդունմանն ու հետագա իրականացմանն ուղղված քայլեր, արտաքին տնտեսական քաղաքականությունը, հիմնական մակրոտնտեսական զարգացումները ԵՄ-ում և Հայաստանում, գործարար միջավայրի բարելավումը, ինչես նաև հետագա տարիների կանխատեսումները համագործակցության տարբեր ոլորտներում:

v <u>ՀՀ ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողով</u>

ՏՐԱՍԵԿԱ Միջկառավարական հանձնաժողովի /ՄԿՀ/ առաջին կիսամյակի գործունեությունն ամփոփվեց 2006թ. մայիսի 2-3-ը Սոֆիայում կայացած ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ 5-րդ տարեկան նախարարական հանդիպմամբ, որին նախորդեց մայիսի 1-ին համապատասխան աշխատանքային և խմբի հանդիպումը:

Նշյալ հանդիպումը եզրափակեց Ադրբեջանի Հանրապետության նախագահությունը ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ-ում:

Նախարարական հանդիպմանը մասնակցող ՀՀ պատվիրակությունը գլխավորում էին ՀՀ Տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանն ու Բուլղարիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Մանասարյանը:

Հանդիպումներին մասնակցում էին ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ բոլոր մասնակից պետությունները բացի Ղրղզստանից /ՀՀ, Ադրբեջան, Բուլղարիա, Թուրքիա, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Ռումինիա, Վրաստան, Տաջիկստան, Ուզբեկստան, Ուկրաինա/, Եվրոհանձնաժողովի ներկայացուցիչները: Համանախագահում էին Ադրբեջանի և Բուլղարիայի Տրանսպորտի նախարարներ Զիյա Մամեդովն ու Պետար Մութաֆչիևը:

Հանդիպման արդյունքում քննարկվեցին և համապատասխան որոշումներ կայացվեցին ֆինանսական, կազմակերպչական, իրավական, ինստիտուցիոնալ բնույթի խնդիրների վերաբերյալ, հաստատվեցին ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ մինչև 2015թ. ռազմավարությունն ու 2006թ. ընթացքում իրականացվելիք Եվրոպա - Կովկաս - Ասիա տրանսպորտային միջանցքի զարգացմանն ուղղված ծրագրերը:

Նիստի արդյունքում հաստատվեց նաև ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ ընթացիկ տարվա Գործողությունների ծրագիրը, համաձայն որի՝ նախատեսվում է գալիք 2 տարիների ընթացքում 13,5 մլն. եվրո ընդհանուր արժողությամբ 4 նախագիծ:

Քննարկվեցին նաև՝

1. Ֆինանսական հարցեր.

Ամփոփվեց ՄԿՀ Մշտական քարտուղարության 2005թ. բյուջեն,

Հաստատվեցին 2006թ. բյուջեում կատարվելիք համապատասխան փոփոխությունները, համաձայն որոնց՝ ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ Մշտական քարտուղարության համատեղ ֆինանսավորման վերաբերյալ համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո /ՀՀ Ազգային Ժողովը ս.թ. մայիսի 31-ի որոշմամբ վավերացրեց և հուլիսի 12-ին ավանդապահին ներկայացրեց համաձայնագրի վավերացման փաստաթուղթը/ անդամ-պետություններից յուրաքանչյուրը պարտավորվում է կատարել տարեկան 50 հազ. եվրո անդամավճարային մուծում,

Հաստատվեց Մշտական քարտուղարության 2007թ. բյուջեն,

Որոշում կայացվեց 2006թ. բյուջեի աուդիտն իրականացնող փորձագետների կազմի վերաբերյալ, որում ընդգրկվեցին Ադրբեջանի, Թուրքիայի և Ղազախստանի փորձագետները:

2. Կազմակերպչական հարցեր.

- Հաստատվեց Մշտական քարտուղարության նոր կառուցվածքը, համաձայն որի՝ բացի նորընտիր Գլխավոր քարտուղարից, քարտուղարությունը կազմված կլինի Միջազգային հարաբերությունների և հասարակության կապերի գծով պատասխանատու փորձագետից, իրավաբանից և ծրագրերի երկու փորձագետներից: Քարտուղարության նոր կառուցվածքով նախատեսված են նաև 2 քարտուղարուհու, հաշվապահի, թարգմանչի, համակարգչային մասնագետի և վարորդի հաստիքներ:

- Նախարարական հանդիպումը միաձայն Մշտական քարտուղարության Գլխավոր քարտուղար ընտրեց Ղազախստանի Տրանսպորտի նախարարության փորձագետ 30-ամյա Ռուստան Ջենալինովը:

2. Իրավական հարց

Նախարարական հանդիպման արդյունքում որոշում կայացվեց ՄԿՀ-ում «դիտորդի կարգավիճակ» ստեղծելու վերաբերյալ: Այս կապակցությամբ համապատասխան լրամշակում արվեց ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ կանոնակարգում:

3. Ինստիտուցիոնալ հարց

ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ 5-րդ տարեկան նախարարական հանդիպման արդյունքում անհրաժեշտ էր համապատասխան որոշում կայացնել ՄԿՀ հետագա ինստիտուցիոնալացման վերաբերյալ:

2005թ. մայիսից սկսած ադրբեջանական նախագահությունը գործուն քայլեր էր ձեռնարկել ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ-ն՝ Միջազգային կազմակերպություն վերածելու ուղղությամբ:

Նկատի առնելով ՄԿՀ-ի Մշտական քարտուղարության Բաքվում տեղակայված լինելու հանգամանքը, ադրբեջանական կողմը վստահություն էր տածում նորաստեղծ կազմակերպության նստավայրը Բաքվում տեղակայելու առթիվ:

Ադրբեջանի ԱԳՆ-ն կազմել էր նորաստեղծ «ԻՆՏՐԱՍԵԿԱ կազմակերպության» «Խարտիայի» նախագիծ, ուր նշված էր որ «ԻՆՏՐԱՍԵԿԱՆ» կհանդիսանա տարածաշրջանային տնտեսական կազմակերպություն: «Խարտիայի» նախագծի համապատասխան հոդվածում շեշտվում էր նաև տարածքային ամբողջականության, սահմանների անքակտելիության սկզբունքը:

Ադրբեջանական կողմը սակայն, իր ծրագրերում անտեսել էր բավական կարևոր հանգամանք, այն է՝ ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ-ն ստեղծվել էր ՏԱՍԻՍ ծրագրի շրջանակներում և շարունակելու է գործել Եվրոպական հարևանության քաղաքականության հայեցակարգի շրջանակներում իրականացվելիք ֆինանսական աջացության շրջանակներում: Դառնալով կազմակերպություն, ԵՀ կողմից ՏՐԱՍԵԿԱ-ի հետագա ֆինանսավորման համար, համապատասխան նոր հայեցակարգ է անհրաժեշտ, ինչը ներկայումս կասկածելի է:

2005թ. հոկտեմբերին Կիևում և 2006թ. փետրվարին Բուխարեստում կայացած ՄԿՀ աշխատանքային հանդիպումների ընթացքում խնդրո առարկա նյութը քննարկելիս, ներկայացվել էր հայկական կողմի դիրքորոշումը՝ ՏՐԱՍԵԿԱ ՄԿՀ-ն միջազգային կազմակերպության վերածելու վաղահասության վերաբերյալ:

Սոֆիայում կայացած քննարկումների ընթացքում, թուրքական կողմն աջակցեց հայկական պատվիրակության առաջարկությանը՝ շարունակել ուսումնասիրությունները

ՏՐԱՍԵԿԱ ՍԿՀ-ն միջազգային կազմակերպության վերածելու նպատակահարմարության վերաբերյալ /թուրքական կողմն առաջնորդվում է տարածաշրջանում միակ տնտեսական կազմակերպությունը /Սևծովյան տնտեսական համագործակցություն/ հյուրընկալելու միանձնյա դերակատարության գաղափարով: Այս առթիվ ընդունվեց համապատասխան որոշում:

2006թ. հուլիսի 20-23-ը Ստամբուլում և 2006թ. դեկտեմբերի 14-16-ը քաղաք Քիշնևում տեղի են ունեցել ՏՐԱՍԵԿԱ միջառավարական հանձնաժողովի Ազգային քարտուղարների աշխատանքային խմբի հանդիպումներ:

Հաշվետու ժամանակահատվածում նիստ չեն գումարել հետևյալ միջկառավարական հանձնաժողովները.

Հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողով
Հայ-մոլդովական միջկառավարական հանձնաժողով
Հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողով
Հայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողով
Հայ-տաջիկական միջկառավարական հանձնաժողով
Հայ-լիբանանյան միջկառավարական հանձնաժողով
Հայ-կատարական միջկառավարական հանձնաժողով
Հայ-լեհական միջկառավարական հանձնաժողով